



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2864

ԵՎ ՄԱՆԿԱՎՈՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏԻՆ ԿԻՑ
ԿՈՎԱԿԱՆ ՄԱՆԿԱՎՈՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏԻՆ

Զեռազրի իրավունքով

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՄԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐ

ԿՈՒՐՍ I

1931

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 5

ԽԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱՀԱՍՈՒ Վ. ՌԵԶՈՒՆԻ

9 (47)
Դ-58

ՅԵՐԵՎԱՆ—1931

26.07.2013

Դ-58

ԿՐ

2864

30 MAY 2011

24 JAN 2006

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ՅԵՎ ՀԵՏ ՌԵՖՈՐՄԱՆ ԵԿԱՆՈՄԻԿԱՆ

(Յերկրորդ առաջադրություն *)

Զնայած այն արագությանը և հեշտությանը, վորով Նիկոլայ Դ-ը ջախջախեց և լիկվիդացիայի յենթարկեց գեկաբրիտոնների շաք-ժումը, Խուսաստանի գասակարգային հակասությունների սրությունը, վորը պայմանավորված եր յերկու հակաղիք սոցիալ-տնտեսական սփառեմի— Փեողալականի, ճորտատիրականի և կապիտալիստականի, բուրժուականի— պայքարով և վորը զանդաղ, բայց անչեղ զարգանում եր XIX դարի յերկրորդ քառորդում,— մոչ միայն չժուլացավ, այլև շարունակում եր զարգանալ ըստ լայնության և խորության։ Ճիշտ ե, գեկաբրիտոնների շարժման լիկվիդացիայից հետո դասակարգերի քաղաքական ոլայքարը, յեթե չհաշվենք 1830 թ. լեհական ազգատամբությունը, մի քանի տասնամյակի ընթացքում այքան խիստ ձեվեր չեր ընդունում, ինչպիսին եյլին 1825 թ. գեկտեմբերի և 1926 թ. հունվարի անցքերը, բայց այնուամենայնիվ այդ պայքարը չարունակում եր չափազանց լարված բնույթ կրել, թեև 30-ական թվականներին բացահայտ, լայնորեն ձեվավորված ոպողիցիոն շարժում նկատելի չեր։ Դասակարգային պայքարի այսպիսի խեղդումը գլխավորապես առաջացել եր անընդուատեսակ պայմաններից, վորոնցում կատարվում եր ճորտատիրական տնտեսության քայքայման պրացեսը։

Յեվրոպայում 30-ական թվականներին բռնկված աղբաբային և արդյունաբերական կրիզիսը հատկապես ուժեղ կերպով հարվածեց ճորտատիրական Խուսաստանի եկոնոմիկան, վորը՝ աղգային կապիտալիզմի թույլ զարգացման հետեւանքով քարչ եր զալիս յեվրոպական կապիտալիզմի յետեից։ Յեվրոպայի տնտե-

*) Այս առաջադրությունից պետք է գրավոր աշխատանք ներկայացնել:



ԳԵՏՀԱՍՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 4057

Գլաւիլիս 6754 (Բ)

Տիրած 1000

սական կրիպիսի հարվածները հատկապես զգալի յեղան գյուղատնտեսության համար, վորի մեջ ինչպես արդեն մատնանշվել է նախորդ առաջարկություններում և դասախրոսություններում, իշխում եր ֆեռղալական, ճորտատիրական տնտեսական ձեւ՝ Հացահատիկների գների խիստ անկումն առաջվա նման ամբողջովին ճորտատիրական աշխատանքի վրա հիմնված կալվածատիրական տնտեսության գլամի կախում եր գրեթե կատաստրօֆայի սպառնալիքը, հատկապես այն տնտեսությունների, վորոնք ամենից աերտ եյին կապված շուկայի հետ։ Բայց այժմ XIX դարի 30-ական թվականներում, կալվածատերը հացահատիկների ցած գների գեմ սկսեց պայքարել վոչ թե իր վարելահողերի կրծատումով, այլ դրանց նշանավոր ավելացումով։ Լայն և մշտական շուկայական հարաբերությունների մեջ քաշվելով, հացահատիկ արտադրող կալվածատերը հարկադրված եյին հացահատիկների ցած գների պայմաններում շուկա հանդող հացահատիկների ապրանքային մասսան շատացնել, վոր իրենց բյուջերում հավասարակըշումություն պահեն։ Ճորտատիրական վոտչինայի^{*)} պայմաններում այսպիսի արդյունքի կարելի յեր հասնել միայն աղայի վարելահողը դրամագու հողարաժնի հաշվին լայնացնելու և գյուղացիների կոռային պարհակները մեծացնելու միջոցով, այն գյուղացիների, վորոնց աշխատանքով և ինսվենտարով կալվածատերը մշակում եր իր գաշտերը, այսինքն՝ ֆեռղալական, ճորտատիրական շահագործումը խիստ սաստկացնելու միջոցով։

Վոչ պակաս վճռականությամբ փորձեցին իրենց տնտեսական դժվարությունները լուծել նաև այն կալվածատերերը, վորոնք բահային տնտեսություն եյին վարում։ Իրենց վարելահողերը լայնացնելու փոխարեն՝ նրանք մեծ քանակությամբ գյուղացիների բահարտու դարձրին, միաժամանակ մեծացնելով նաև բահրայի շափը, վոր XIX դարի 50-ական թվականներինը XVIII դ. համեմատությամբ 4-5 անդամ մեծացել եր իրենց հողագործական

*) Վատչինա հին Ռուսիայում կոչվում եր այն հողը, վորի աիրավետաման իրավունքը ժառանգարար պատկանում եր իշխաններ Մոսկվայի Ռուսիայում վատչինա յեր կոչվում ֆեռղալին պատկանող և գյուղացիներով բնակված հողը։ XIX-րդ դարից սկսած վատչինա յե կոչվում կալվածատիրոջը ժառանգարար պատկանող հողը, ի տարբերություն կարգածի (ուստի պոմեստե)։ Վորի տիրապետումը կապված եր պարտադիր պետական ծառայության հետ ֆեռղալիմի քայլայիման հետ վատչինայի և կարգածի աարելությունները հետզհետե վերանում են և XVIII-րդ դարի սկզբին փոխարինվում են ևանշարժ կալվածք լնա, հանուը տերմինով։

Ծանոթ թարգմ.

և առաջին հերթին հացահատիկային տնտեսությունը մինիմումի հասցենելով, բահրային տիպի կալվածատերերը ոկսեցին վոտչինային մանուֆակտուրայի կողքին զարգացնել գյուղատնտեսական ինդուստրիայի զանազան ճյուղերը, որինակ՝ շաքարի ճականութեղի, ողի քաշելու, ուլասիբովի և այլն։ Այսպես որինակ՝ միայն շաքարի գործարանների թիվը 1852 թ. հասնում եր 427, վորոնց ճնշող մեծամասնությունը սպասարկվում եր ճորտ բանվորական ուժով։ Այդ գործարաններն աշխատում եյին այն հումութով, վոր գյուղացիները տալիս եյին իբրև նաստուրալ բահրայ:

Ճորտատիրական տնտեսության զարգացման նշված պրոցեսը XIX դարի յերկրորդ քառորդում ել ավելի խորը քայլայեց ճորտատիրական եկոնոմիկայի հիմքերը՝ ինքնուրույն մանր գյուղացիական տնտեսությունը։

Ֆեռղալական, ճորտատիրական շահագործման ուժեղացումը, վորը գյուղացու հողարամնի հաշվին աղայի վարելահողի լայնացման և դբեթե յերկու անդամ կոռային բանվորական որերի շատացման հետևանքով կոռային շրջանում գյուղացիական հողի բացահայտ եքսպրոպրիացիայի ձեւ ընդունեց, առաջ բերեց ճորտ գյուղացիության խիստ աղքատացում և քայլայում, նման հետեւյանքներ բահրայի չափերի խիստ մեծացման պատճառով նկատելի յեն նաև բահրային կալվածներում։

Ճորտատիրական տնտեսությունը «ոացինալացնելու» այս բոլոր միջոցառությունների հետեւանքով այդ տնտեսությունն սկսեց ուժին կերպով քայլային մյուս ծայրից, իր հիմնական տնտեսական արտադրական բջիջի ինքնուրույն մանր գյուղացիության կողմից։ Կոռային գյուղերում տեսնում ենք ճորտ գյուղացու անկում, վոր առաջացել եր նրա տնտեսության կենդանի և մեռյալ իննենտարի քայլումից, վորովհետեւ ուժեղացած շահագործումը վոչ միայն արդելք եր հանդիսանում տնտեսության լայնացրած վերաբերությունը, այլ և խանգարում եր հասարակ վերաբարելությունը։ Կոռովր գյուղացին աստիճանարար անկման եր յենթարկվում։ Բահրային գյուղերում բահրայի ամձան, և գրամտիկան բահրային փոխանցված գյուղացիների քանակի մեծացման հետեւանքով՝ զրամական հարաբերություններն ավելի խոր և ավելի լայն եյին թափանցում, ինչ վոր առաջ եր բերում գյուղացիության ավելի արագ չերտավորում։

Լիովին բնական և, վոր կալվածատերերի տնտեսական քաղաքականությունը կրիպսի տարիներում խիստ դժողովություն եր

առաջացնում գյուղացիների մեջ : Ինչքան ել վոր կալվածատերերը ձևոտում եյին ամենազաժան ռեպրեսիաների միջոցով զալել իրենց ճորտերին , վերջիններս սկսում եյին շարունակ ամելի հաճախ կը- տրուկ կերպով բողոքել , դիմելով պայքարի զանազան ձեվերի— կալվածատիրական ցանքերն արածացնելու , հրձիգության և վեր- ջապես անհատական տերորի : կալվածատերերի սպանություն- ներն իրենց ճորտերի ձեռքով 30-50-ական թվականներում տարեց տարի հաճախակի յեն դառնում , 40-ական թվականներում ուժորա- կան քաղաքական քրոնիկայի բնույթ ստանալով :

Ահա թե ինչո՞ւ այդ տարիներում կալվածատերերի մեջ ինք- նակալության դեմ լայն ոպողիցին շարժում չկա : 30-40-ական թվականներում կալվածատերերը «ամուր իշխանության» , իրենց ողործադիր կոմիտեյի դիկտատուրայի , ինքնակալության կարիքն զգում եյին ավելի մեծ չափով , քան յերեւիցե :

Արդյունաբերության կրեպիսի հետեւանքների դեմ մղիմոց պայքարն այլ ուղղությամբ եր ընթանում : Խոշոր կալվածատիրա- կան ազնվականությանը , շահաղբոված լինելով արդյունաբերու- թյան զարգացումով , վոր անմիջականորեն ճորտատիրական , իսկ անուղղակի կերպով (վերև մատնանշված պատճառներով)*) կա- պիտակատական եր , հասավ այն բանին , վոր նրա չափերի վերաբեր- մաքր գգայուն Նիկալայ I կառավարությունը գաժան պրոտեկ- տիօնիստական (հովանավորական) տարիք մտցրեց , ամուր կեր- պով պաշտպանելով ներքին շուկան յեկարպական արդյունաբերու- թյան մրցությունից : Բայց նույնիսկ դաժան մաքային քաղաքա- կանությունն ի վիճակի չեր հաղթահարել կրիզիսի հետեւանքնե- րը , վորի ծանրությունը ոռուսական արդյունաբերության համար՝ ներքին շուկայի քիչ տարողության պատճառով՝ կրկնապատկվում էր : Արդյունաբերությունը գծվարին կացությունից հանելու հա- մար , Նիկոլայ I կառավարությունը ներքին շուկայի լայնացման ուղղությամբ խորը սոցիալական նշանակություն ունեցող վորեն արմատական միջոց չձեռնարկեց , այլ միայն սահմանափակվեց Ուկրայնան համապետական մաքային գծի մեջ ներառելով և իր զինավոր ջանքերն ուղղեց արտաքին , գլխավորապես արևելյան շուկաները նվաճելու կողմը : Նոր շուկաների գրավումը վաճառքի նոր վայրեր բաց արեց ինչպես ճորտատիրական , այնպես ել կապի- տակատական արդյունաբերության համար :

Այսպիսով ինքնակալությանը հաջողվեց կրիզիսի տարիներում սոցիալ-տնտեսական և քաղաքական կարդի արմատական բեկումից խուսափել :

Բայց մեր կերպ կրիզիսից գլուխ հանելով , իշխող դասակարգը չհաղթահարեց , այլ միայն հետաձեզ հիմնական հակասություն- ների լուծումը , վորոնցով պայմանավորված եր ճորտատիրական տնտեսության քայլայման պրոցեսը :

Յեթե ճորտատիրական մեթոդներով գյուղատնտեսության կը- բիզիսի դեմ մղած պայքարն ուժեղացրեց ճորտատիրական տըն- տեսության քայլայման պրօցեսը , ապա կրիզիսի տարիներում ինք- նակալության արդյունաբերական քաղաքականությունը ճորտա- տիրական տնտեսության համար առաջ բերեց ամենավաղվոր յերեվույթը , այն ե՝ կապիտալիստական հարաբերությունների ա- րագացրած զարգացումը և ճորտատիրական պետության հիմնա- կան դասակարգերի քայլայումը :

Վաճառքի նոր շուկաների նվաճումը արդյունա- բերության , առաջին հերթին կապիտալիստական թեթեվ ինդուս- տրիայի զարգացումը , վորն ավելի հետությամբ եր հարմարվում արելելյան շուկաների պահանջներին , քան սակավաշարժ ճորտա- տիրական ինդուստրիան : Ճորտատիրական սեկտորում գրությունն ամենից լավ եր յերկաթագործական արդյունաբերության մեջ , վորի պրոցեսկիայի մեծ պահանջ եր ներկայացնում պետական տնտեսությունը , գլխավորապես ուղղմական կարիքների համար : Կապիտալիստական գործարանի զարգացումը նշանավոր չափով շատացրեց վոչ-հողագործ բնակչությունը , զարկ տալով քաղաքա- յին բնակչության աճմանը և հատկապես Փարբիկա-գործարանա- յին շների առաջանալուն , վորոնք ուղիսների պես ցրված եյին ճորտատիրական գյուղական Ռուսաստանի ծովում : Ֆարբիկա- գործարանային ամբացող շները և գրանցում վետեղված Փարբի- կաներն ու գործարանները ճորտատիրական գյուղի վրա ամենա- քայլայիչ աղղեցությունն եյին ունենում ինչպես կենցաղային , այնպես ել գլխավորապես , տնտեսական տեսակետից : Վերջին հան- գամանքն ամենից առաջ արտահայտվում եր այն բանով , վոր շրջա- կա գյուղերի գյուղացիները լայն հոսանքով արդյունաբերական գործունեյության մեջ եյին քաշվում իրեւ տնտեսագործներ :

Կալվածատերերը վոչ միայն չեյին արգելում , այլ ամեն կերպ չովանափորում եյին այդ , վորովհետով դա նրանց հնարավորու- թյուն եր տակի բահրայի տակ գցել նաև այն կոովորդուղացի- ներին , վորոնք ձմռանը զբաղվում եյին տնտեսագործությամբ :

*) Տես № 4 առաջադրությունը («Դեկաբրիստներ»),

Այն խնդիրը, վորի վրա գլուխ ելին պատռում դեկաբրիստների ժամանակակիցները, թե ձմռանը ինչ պարհակներ բարդեն ճորտերի վրա այն կարվածներում, վորտեղ վոտչինային մանուֆակտուրան (քաթմանի, ճոպանի և այլն) *) քայլայիկել եր, թվում եր թե լուծում ստանալու վրա յեր... բայց այդ միայն թվում եր: Ճորտատիրական տնտեսության կայունացման իլլյուզիան շատ արագ և ակներեվ կերպով չքանում եր այն բանի չնորհիվ, վոր իբր թե կայունանացած եկոնոմիկայի խորքերում տեղի յեր ունենում ֆեոդական, ճորտատիրական հասարակության յերկու հիմնական դասակարգի—կայլածատերերի և դյուլացիության քայլայումը:

Ներելն արդեն նշեցինք դյուլացիության չերտավորման փաստը Հենց ճորտատիրական շահագործման ուժեղացման հետեվանքով, վոր շատ հաճախ դյուլացիության բացահայտ եքսպրոպրիացիայի յեր փոխվում: Դիֆերենցիացիայի պլրոցեսը լայնորեն ընդգրկեց նաև իշխող դասակարգին: Աղնականության խոշոր կայլածատիրական մասը հմտորեն հարմարվում եր նոր պայմաններին, շարունակելով հողի ճորտերի մորիլիզացիան ազնվականության մնացած իմրակների հաշվին: Միջին խմբերը, արտատնտեսական հարկադրանքն ուժեղացնելու միջոցով, դժվարությամբ հարմարվելով դասավորված պայմաններին, փաստապես միայն մասնակիորեն ելին կայունացնում իրենց տնտեսական դրությունը, վորովհետեւ չնայած վորակական բարձր ցուցանիշներին—վարելահողի լայնացում, չուկա հանվող ապրանքների քանակի մեծացում, իրենց տրնտեսությունը կառավարում ելին նշանավոր չափով իրենց կարգածները գրավ դնելու միջոցով... իսկ մանր կայլածատիրական աղնականությունը կամ աստիճանաբար անկման եր դիմում ստըրկատիրական պլանացիոն սխտեմի (այսպես կոչված «մեյյաչինայի»)**) ուղղությամբ, կամ թե կատաստրոֆիկ կերպով քայլում և դասակարգալուծվում եր միջին ազնվականության անկենունակ շերտերի հետ միասին:

Իսկ այդ նույն ժամանակում աճում և ամրանում եր առևտրական և արդյունաբերական բուրժուազիան, հասունանում և գարգանում եր ճորտատիրական գործումը:

*) Տես նախորդ «Դեկաբրիստներ» դասախոսությունը:

**) Մեյյաչինա (ռուսերեն մեյյաց—ամիս—քառոս) յեր կոչվում այն ամսական օպարենի փայլը, վոր կայլածատերը տալիս եր ճորտ դյուլացում՝ նրանից միլած հողի «փոխարեն»: Մեյյաչինա ստացող դյուլացին մեյյաչիկ եր կոչվում: Կայլածատերը կամայականորեն ուղած ճորտ դյուլացում՝ մեյյաչիկ եր դարձնում: Կայլածատերը մեյյաչինայի միջոցով դյուլացիներին հաղալուք եր

ցիական բուրժուազիան, վորի առանձին ներկույացուցիչները համար հանդիսանում ենին տիտղոսավոր ազնվական ընտանիքների խոշոր վարկատունները: Իսկ ներքեմից, անհայտապես գիշատիչ շահագործման, ծայրահեղ աղքատության և լիակատար իրավագրկության պայմաններում, աճում եր յերիտասարդ, գեռ իր բոլոր արմատներով ճորտատիրական գյուղի հետ կապված, ուսւական բանվոր դասակարգը, վորը դեռ չեր դադարել գյուղացի վիճակուց, բայց հաճախ և բավական աղդու կերպով հիշեցնում եր իր մասին և՝ գործարանատերերին, և՛ իր սեփականատերերին—կալվածատերերին:

Համենայն դեպս հիշեցնում եր այնքան աղդու կերպով, վոր նույնիսկ նիկոլայ I կառավարությունը, վորը սովոր եր սոցիալական ընդհարումները վոչ թե ուժորմներով, այլ ուսպեսսիաներով լուծել, հարկադրված եր գործարանային որենադրության դիմել, վոր թեկուղ ամենասթույլ չափով, այն ել ձեվականապես, պետք և կանոնավորել արդյունաբերական բանվորների դրությունը:

Այս ամենը միայն այն է վկայում, վոր ճորտատիրական տնտեսության թվացող «կայունացումը» խիստ անհաստատ եր, և առաջին խոշոր ցնցումների ժամանակ եպոխայի հիմնական միտումը—կապիտալիզմի և ճորտատիրության ոլայքաըր—միայն խստությամբ և սրությամբ յերեվան և գալու: Այս ել կատարվեց 40-ական թվականների կիսում: Արեմտյան Յեփրամյանի 40-ական թվականների արդյունաբերական վերելքն իր զորեղ աղդեցությունն ունեցավ նաև Ռուսաստանի վրա: Մի շարք խոչոր տեխնիկական բարելավումներ, վոր ավարտեցին Անդրիայի արդյունաբերական հեղաշրջումը, խորացրին այդ հեղափոխությունը Ֆրանսիայում և պայմանավորեցին զրա արագ զարգացումը, հասկապես 1848 թ. հեղափոխությունից հետո, Գերմանիայում, —հսկայական ներգործությունը ունեցան նաև ռուսական արդյունաբերության, առաջին հերթին նրա կապիտալիստական սեկտորի վրա: Մանուկ մեքենաների եթանացումը և լավացումը, շուկայում եժան մանածագու-

դարձնում, իր տնտեսությունը լայնացնում և նրանց ձեր աշխատանքն աղտաղություն: Մեսյաշինայի չափերը տարբեր ելին, հաճախ այնքան քիչ եր չինում այդ փայլը, վոր դյուլացին հաղիկ մի կերպ աղբում եր: Մեսյաշինան հասկապես զարգացած եր XIX դարի առաջին կիսում: Գյուլացիներին ամեն կերպ պայքարում ելին մեսյաչինայի գեմ, հաճախ բանը հասնում եր ապստամբության և այլն:

Ծանօթ. թարգմ.:

ծական դագչյահների և այլ մեքենաների յերեվան գտնի ոռոսական մանուժակառաւայի տերերին ել հարկազբցին իրենց ձեռնարկությունների տեխնիկական վերակազմության դիմել։ Յեվ իրոք, այդ տարիներում սկսվում է հին ձեռնարկությունների տեխնիկական վերասարքավորման և նորերի կազմակերպման այնպիսի մի նշանավոր պրոցես, վոր ամեն ինչ վկայում է, թե Ռուսաստանում ել արդյունաբերական հեղափոխություն և սկսվում։ Բայց վորպեսզի այդ հեղափոխությունն իրոք զարգանար, անհրաժեշտ եր արդյունաբերական պրոլետարիատի պատ կազմվելու, զարգանալու և աճելու պայմաններ ստեղծել։ Բայց հենց այդ պայմաններն ել չըկային Նիկոլայան Ռուսաստանում, իսկ պահանջնական, ինքնակալության պոչից քարշ յեկող ոռուսական արդյունաբերական բուրժուագիան, վորը բավարարված եր Հովհաննավորական մաքսային նոր չուկաների նվաճումով, վոչ արամադրություն, վոչ ել արիություն ուներ ինքնակալության առաջ դնել ճորտատիրության գոնե մասնակի լիկվիդացիայի—դյուզացիների ապատազրության չարցը։

Այդ հարցը գրվեց հասարակական յերկու այլ ուժի—դյուզացիության և միջին կալվածատիրերի կողմից, վորոնք իշարկե հարցը տարբեր ձեվով ելին դնում և տարբեր ձեվով փորձում լուծել այն։

Ռուսական բուրժուագիան առաջին անգամ, այն ել խիստ անորոշ ձեվով, այդ մասին խոսեց միայն ժամանակ, յերբ յերկրում արդեն սուր պայքար եր սկսվել գյուղացիության և կալվածատիրերի միջև վոչ միայն ճորտատիրության լիկվիդացիայի, այլև այդ լիկվիդացիայի ճանապարհների, տեմպերի և մեթոդների բնույթի համար։ Բայց սրված դասակարգային պայքարի այդ շրջանում ել արդյունաբերական բուրժուագիան թագնվում եր միջին աղջականության յետեւը, վորը խոչոր տնտեսական ցնցումների ազդեցության առակ փորձում եր իր տնտեսությունը բուրժուական ձեվով վերակառուցել։

ՀԱՅԻ ԳՆԵՐԸ ՅԵՎ ԿՈԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐՈՒՄ

1848 թվականի հեղափոխությունը, չայած իր «անավարտ ընույթին» կենտրոնական Յեվրոպայի յերկրներում, այնուահենիվ մեծ չափով Արևմտյան Յեվրոպայում «ուղի մաքրեց» (Լենին) կապիտալիզմի զարգացման համար։ 1848 թ. հետո արդյունաբերական կապիտալիզմը հոկայան հաջողություններ ունեցավ

վոչ միայն Անգլիայում և Ֆրանսիայում, այլ և հետամնաց յերկրուներում, ինչպես որինակ Գերմանիայում և Ավստրիայում, հատկապես առաջնությունը կապիտալիստական արդյունաբերության արագ զարգացումը և գրա չնորհիվ քաղաքային բնակչության արագ և նշանավոր աճումը կտրապէ կերպով փոխեցին յեվրոպական հացածատիկ շուկայի կոնյունկտուրան։

40-50-ական թվականներին հացահատիկի զների բուռն աճումը ոռուսական կալվածատիրոջ առաջ նոր փայլուն հեռանկարներ բաց արին, վորոնց մասին նա արդեն դադարել եր յերազել՝ ճնշված 20-30-ական թվականների ազգարային կրիպիսից։ Այդ հեռանկարները հատկապես գրավիչ ելին թվում 50-ական թվականներին նախորդող հնդամյակի փորձի չնորհիվ, վոր հացի արտահանության չտեսնված ունկորդային թիվ եր ցույց տվել։ Այսպես, 1836-40-կան թվականներում Ռուսաստանից արտահանված եր մոտ 460 հազար տոնն հացահատիկ, իսկ 1846 թվականին՝ մոտ 836 հազար տոնն, այսինքն՝ հինգ տարվա ընթացքում արտահանությունը չափացել եր 80 տոկոս։ Բայց գաժան իրականությունը շուտով՝ մի շաբթ ուղղումներ մտցրեց այդ լուսավոր պատկերում։ Չնայած կրոպական հացահատիկի շուկայի աճող պահանջին և Ռուսաստանի հացահատիկի արտահանության բացարձակ մեծացման, ոռուսական հացածատիկի վաճառքը յեվրոպական յերկրներում նոր գժվարությունների յեր հանդիպում։

Այդ գժվարություններն առաջացել ելին յամաքային Յեվրուոյայի, գլխավորապես Գերմանիայի, հատկապես Պրուսիայի, գյուղացիության արագ կապիտալիզացիայով։ Թեև 1848 թ. հեղափոխությունը Գորմանիայում Փեոդալիզմի շատ մնացորդներ թողեց (Արևմտյան Գերմանիայում և ել ավելի մեծ չափով Արևելյան Գերմանիայում, գլխավորապես Պրուսիայում), վորոնք ծանր բեռի նման կախաց ելին յերկրի արտադրողական ուժերից, այնուամենայնիվ այդ «անավարտ» հեղափոխությունը դյուզացման ուժեղ գարկ տվեց։

Զարդար և աչքաթող անել այն, վոր կապիտալիզմի զարգացման համար Պրուսիայում հիմնական, ամենասուածին պարմաններն ըստեղծված ելին XIX դարի սկզբում։ Տնտեսական և քաղաքական խոր կրիպիսի ազդեցության տակ, վոր բարեւացել եր նապունի զեմ մղված պատերազմում Պրուսիայի ուղղմական ջախջախումով, պրուսական կարգածատերերը՝ հեղափոխության սարսափից դրդված՝ դեռ XIX դարի սկզբին դիմեցին նորտատիրական տղն-

տեսության լիկվիդացիային, սկսելով ճորտատիրական իրավունքից, վորն իր հիմնական գծերով վերացվեց 1807 թ.։

Արա չնորհիվ 50-ական թվականներում Պրուսիայում, չնայած 1848 թ. հեղափոխական դոման պրատությանը, գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման համար անչափ ավելի մեծ նախաղրյաներ կային, քան Ռուսաստանում, վորտեղ կալվածատերներն այդ տարիներում միայն մոտենում եյին այն հարցերի լուծմանը, վորոնց լուծումը նրանց պրուսական կոլեգները վաղուց տվել էյին։ Պրուսիայի գյուղատնտեսության կապիտալիզացիան, վոր թևե XIX դարի վերջին չորս տասնամյակում դանդաղ եր ընթանում և 1848 թ. հետո արագացավ, այն հետեւ անդամնքն ունեցավ, վոր 50-ական թվականներում ոռուսական կալվածատերը հանձննա պրուսական կալվածատիրոջ, այսպես կոչված «յունկերի» զորեղ մրցակցի հանդիպեց։ Այդ մրցակցի ուժը բացի այն բանից, վոր նրա տնտեսության մեջ արտադրողական ուժերի մակարդակը շատ ավելի բարձր եր, քան ոռուսական կալվածատիրոջ տնտեսության մեջ, պայմանավորված եր նաև մի ամբողջ շարք լրացուցիչ նախատառը մոմենտներով, այն և՝ հացահատիկների վաճառքի չուկայի մոտիկությամբ, չառչող ծովային նախահանդստներով, ավելի լայն հյուղավորված գետային և ցամաքային ճանապարհների սիստեմով և այլն։

Պրուսական յունկերը լիովին ի վիճակի չեր բավարարել Յեվրոպայի հացահատիկի ամբողջ պահանջը, բայց այնուամենայի նա կանգնեց ոռուս կալվածատիրոջ ճանապարհի վրա, արգելելով նրա մուտքը ցամաքային յերկրների հացահատիկների շուկաները և դժվարացնելով նրա մուտքն անգլիական շուկա, վորի տարրությունը հացահատիկային մաքսերի վերացումից հետո, խիստ մեծացել եր։ Ասենք, այդտեղ, անգլիական հացահատիկի շուկայում ել, հանձննա ամերիկական ֆերմերի յերեվան յեկավ մի նոր, առաջժմ չեղու չեւին, մրցակցից։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները 1836-1840 թ.թ. արտահանեցին 9 միլիոն դոլարի հացահատիկ, իսկ 1846-50-ական թվականներում—արդեն 28 միլ. դրամրի։

Ոռուս կալվածատերը կարող եր հաղթահարել պրուսական յունկերի մրցակցությունը (50-ական թվականներում նա յեր գըլխավոր մրցակցը, հատկապես կենտրոնական Ռուսաստանի կալվածատիրոջ համար, վորը յերազում եր արտաքին շուկա հանել իր հացահատիկը) միայն իր հացահատիկն եմանացնելու միջոցով, իսկ

այդ հնարավոր եր միայն տնտեսավարության կապիտալիստական մերուներին անզննելով։

Այդ հանդամանքը կտրուկ կերպով տարբերում ե «առաջավոր», զեափ կապիտալիզմ ձգտող 50-ական թվականների կալվածատերերին նրանց 20-ական թվականների սկզբի նախորդներից։ Այս ժամանակ, 1815-1920 թ.թ. երոպական հացահատիկի չուկայի բարձր կոնյունկտուրայի ողտագործման անհնարինությունն առաջին հերթին պայմանավորված եր այն բանով, վոր կենտրոնական և Արևելյան Յելբուպական Ռուսաստանի ճորտատիրական տնտեսությունը*) զորեղ, տնտեսապես և տեխնիկապես առաջալիոր մրցակցի բացակայության պահին, հարմարված չեր յեվրոպական նոր շուկայական պայմաններին։ Իսկ այժմ ոռուսական կալվածատիրական տնտեսությունը, վոր առաջվա պես հիմնված եր լճացած ճորտատիրական տեխնիկայի վրա, բաղկալեց զորեղ մրցակցի հետ, վորը հենվում եր գյուղատնտեսության ավելի պլոդուսիվ կառուցվածքի վրա։ Այս նշանակում եր, վոր համայնարհյան տնտեսության հետ ունեցած կապի միջոցով ոռուսական կալվածատիրոջ ճորտատիրական տնտեսությունը 50-ական թվականներում կապիտալիստական գյուղատնտեսության անմիջական ճնշման տակ եր դժուլում։ Ռուսաստանի գյուղատնտեսությունը պետք ե կամ խիստ յետ նահանջեր, կամ ինքը վերակառուցվեր կապիտալիստական ձեզ։ Վհա թե ինչու ի տարբերություն ԽIX դարի սկզբի, յերբ «աղատագրական» տրամադրությունները համակեցին մինչեւ ազնը-գականության, գլխավորապես կենտրոնական Ռուսաստանի և մերձ-լորդյան նահանգների,**) մի շատ նոր շերտին, 50-ական թվականներում նման տրամադրությամբ համակված եյին ամբողջ Ռուսաստանի միջին աղնվականության ճնշող մծամասնությունը և խոշոր աղնվականության մի զորեղ շերտը։

Բուրժուական տրամադրությունների թափանցումը տիրող գասակարդի հսկայական զանդվածում, աղնվականության ներկայացուցիչների բազմաթիվ յելույթներին, ներկայացուցիչների, վորոնք պահանջում եյին ճորտատիրական տնտեսության անհաջար վերակազմություն, շատ ավելի ծանրակշիռ նշանակություն եր տալիս, քան 40 տարի առաջ։

Ինքնակալությունը չեր կարող չունկնդրել այդ ձայները։ Թեև նիկոլայ I եր վոստիկանական տպարատի ամբողջ ծանրությամբ

*) Տես նախորդ «Դեկաբրիստներ» առաջադրությունը։

**) Տես «Դեկաբրիստներ» առաջադրությունը։

ջտնում եր խլացնել այդ ձայները, բայց այնուամենայնիվ նա մեծ տագնապով եր ունկնդրում այն, վորովհետև աղնվականության բուժության անորեն արամադրված շրջանների ձայները միատեսակ չելին:

Ենքնակալության տնտեսական (դվամակորապես արտաքին) քառականականության քննադատությունն սկսեց լավել նաև մի այլ սոցիալական միջավայրից—մինչև այդ քաղաքականապես անմըռունչ և «Հավատարիմ հարատակ» արդյունաբերական բուժությափայտ միջակայիրց:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ՈՂՈԶԻՑԻԱՆ ՑԵՎ ԴՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինտուստրիալ կապիտալիզմի արագ զարգացումը Արևմտյան գագա՞ն դանդաղանարու իիմենական պատճառը ներքին շուկայի ռաջին կիսի ընթացքում գյուղացիության շերտավորումը բավա դիֆերենցիան արտահայտվում եր այն բանով, վոր գյուղական չափազանց անբավարար տարողությունն եր: Թեև XIX դարի առաջի բոլորովին կանգ տանել:

սկսեց խախտել նաև ոռուսական արդյունաբերական բուժությունի կան արագ եր զարդանում, համեստապես 20-50-ական թվականներին ձեզերավ, վոր ներքին չուկայի կառուցչածքում (ստրուկտուրապետագիտի չերտի զատման պրոցեսին զուրածեռություններում), սկսած 50-ական թվականների յերկրորդ կիսից, ձորատարիական տնտեսության շրջանակներում գյուղացիության տուրայում) չեր կարող վճռական փոփոխություններ առաջացնել:

Սրբյունաբերության զարգացման 40-ական թվականների համար ստորին խմբերը վոչ թե պրոլետարանում, այլ պատվերարում, բայց այդ կատարվում եր այնպիսի պայմաններում և այն-

մուսաստանի կապիտալիստական արդյունաբերության դարմենաւար վոլովիութեամբ 50-ական թվականների սկզբունք սկսեց դաշտակել, իսկ 50-ական թվականների կիսում սպառնում եր

: մուսիրիտեգիդուս նում ելին, մնացած գյուղացիական մասսայի ճնշող մեծամասնությունը քայլայի և աղքատանարով, իր տնտեսական ճեղով առաջիւնան նման նաև առաջիւնան նման նաև առաջիւնան, սպառողական եր մնում: Այս պատճառով գյուղացիության զնողունակությունը չափազանց դանդաղ եր աճում, իսկամ յետ մնալով կապիտալիստական արդյունաբերության աճումից: Ներքին չուկայի փոքր տարողությունը բանվորական չուկայի անփոփոխելիորեն աննպաստ կացության պայմաններում (բանվորական ուժի թանգության) կապիտալիստական արդյունա-

բերության համար մեծ դժվարություններ եր ստեղծում, վոր յերկրի ներսում՝ ճորտատիրական անտեսության «Հիմքերի» անխորուակինիության պայմաններում՝ համարյա անհնար եր հաղթահարել:

Նվաճողական քաղաքականությունն Արևելքում և հովանավորական սխատեմն Արևմուտքում, վոր ոռուսական տեխնիկապես էտամանաց գործարանը պաշտպանում եր արևմուտայելքուական մշրակցությունից, իւարկե, իրենց գրական արդյունքները տալիս ելին: Բայց 50-ական թվականներից սկսած ոռուսական արդյունաբերական կապիտալի արևելյան շուկաներում սկսեց վատանալ: Անդպիսի և ֆրանսիայի բուռն կերպով զարգացող կապիտալիզմն սկսեց ոռուսական կապիտալիզմը դուրս մղել իր արտաքին շուկաներից, հաղթելով նրան և՛ աղքանքների մեծ քանակով, և՛ այդ աղքանքների ավելի լավ գորակով, և՛ եժանությամբ: Բայց դրանից ծովագնացության ասպարիզում տեխնիկական նորմուծումներ կատարվելու չորհիվ (անիվալոր չոգնավից պատւակավորի անցնելու չնորհիվ) Անդիման և ֆրանսիան 50-ական թվականներում այնպիսի գորեղ առևտրական ու ուղմական նավատորմիլ ունելին: Վոր հեշտությամբ հաղթահարում ելին այն սակավաթիվ առավելությունները, վոր իր տրամադրության տակ ուներ Մուսաստանը—Միջին Ասիային հարեվան ցամաքային սահման և բազմամարդ բանակ: Կարճ ջանքերից հետո Անդիման և ֆրանսիան նուսաստանին դուրս մղեցին Միջին Ասիայից և թուրքիայի ոգնության վրա չենվելով, սկսեցին նրան դուրս մղել նաև Մերձավոր Արեվելքից:

Վոչ արդքան վճռական, բայց այնուամենայնիվ թիկունքից ուժեղ հարվածի յենթարկվեց ոռուսական արդյունաբերությունը նաև իր ամենմասութիվ հարեւանի—Պրուսիայի կողմից: Պրուսական արդյունաբերությունն ինտենսիվ զարգանալով՝ արագորեն բաղկվեց իր ներքին չուկայի անբավարար տարողությանը և այս պատճառով չատ վաղ, գեռ 30-ական թվականներում, սկսեց արտաքին չուկաներ, հատկապես Արևելք գուրս գալու ուղիներ հարթել: Պրուսիայի վաճառքի նոր չուկաներ տիրելու ձգառմաները հատկանուութեղ ելին 50-ական թվականներում: Թագնված նուսաստանի հետ կնքած առևտրական դաշնաքի յետն (վորին նուսաստանը համաձայնվեց, անդլուֆրանսիական նշված զաշինքի դեմ զաշնակից գոտնելու հույսով), պրուսական վաճառականները հեղեղում ելին նուսաստանը տարեկան մի քանի միլիոն ուուրլու ավելի էժան

մաքսանենդ մանուֆակտուրաներով, հենց գրանով նեղացնելով ներքին շուկայի առանց այն ել փոքր տարողությունը:

Այսպիսով, յելքոպական կայսրական կայսրական 50-ական թվականներում զորեղ ճնշում եր գործադրում Ռուսաստանի ժողովրդական տնտեսության վրա, այն ել վոչ միայն ձորսատիրական սեկտորի վրա, վորը գերիշում եր, այլև դեռ չամրացած կազինալիստական սեկտորի վրա: Առաջինը յելքոպական կազինալիզմի ճնշման տակ փոռում ու քայլայլում եր, յերկորդը՝ հյուծվում և նեղանում: Այդ հարվածները, վոր յելքոպական արդյունաբերական կապետալիք հասցնում եր ուստական արդյունաբերությանը, կրկնապատկեցին արդյունաբերական կապիտալիքին արդյունաբերական կապիտալիքի նորության, արդյունաբերական բուրժուազիայի և նարտատիրական պետության, ինքնակալության հակասությունները:

Այդ հանդամանքը հաշվառելով, նիկոլայ I կառավարությունը վճռեց կազինալիստական շրջապատման ֆրոնտը ճեղքել «Հայրենական» արդյունաբերության և հայահատիկի արտահանության համար նոր առևտրական ճանապարհներ և նոր շուկաներ նվաճելու միջոցով:

Դ-Գ-ԱՀՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ

ՇԱՐՔԵՐՈՒՄ

Ինքնակալությունն իր արտաքին քաղաքականությունն ակտիվացնելու ուղին եր մզում ելի մի հասարակական ուժ, վորը XVI դարի վերջից Ռուսաստանի ամբողջ պատմության մեջ հոկայտական դեր է խաղացել: Այդ ուժը խոշոր առևտրական բուրժուազիան եր:

Ներքին և արտաքին ապրանքապատույտի զարգացման դանդաղացումը, Փինանսական սիստեմի լիակատար քայլայլումը, ճորտատիրական պետության տնտեսական կառերի ընդհանուր անկումը—այդ բոլորը խիստ քնացրեց առևտրակալիտալիստական կուտակման տեմպը և դանդաղեցրեց առևտրական կազինալիք արդյունաբերականի վոխարկվելու առանց այն ել համեստ պրոցեսը: Այս ամենը միասին ընդհանուր դժոհության Փոնի վրա խմբում առաջ բերեց նույնական և խոշոր առևտրական բուրժուազիայի մեջ:

ՋՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նիկոլայ I անհանդատացած ոպողիցիայի այսքան յերկար և խայտարգեած ճակատից, առանց մտածելու, անպատճառ, ոազմական մի ավանդուրայի դիմեց, սարքելով Ղրիմի պատերազմը: Նիկոլայ I նոր հափշտակողական պատերազմի ուղին մտնելու պատրաստականությունը, պատերազմ, վոր Ռուսաստանի գեմ միա-

ցրեց Անդլիային, Ֆրանսիային և Թուրքիային, նույնպես և Ավստրիային ու մասամբ Պրուսիային, չի կարելի հասկանալ, յեթե չհաջուենք, վոր և ոպողիցիոն ազնվականության վերնաշերտերը, և արդյունաբերական բուրժուազիան, և հասկապես տակտական բուրժուազիան նիկոլայ I դրդում ելին դեպի պատերազմը, գերադասելով ինչպես նրանց թոռները 50 տարի անց ուսւայտուական պատերազմի նախորյակին, «Հաղթական լավ պատերազմը» վանդապոր սոցիալ-տնտեսական ռեֆորմի: Այդ դասակարգերը գյուղացիական ռեֆորմի մասին վճուականորեն խոսեցին միայն այն ժամանակ, յերբ Ղրիմի պատերազմում ուստական բանակի ջախճախումը միանգամայն համոզիչ կերպով ապացուցեց, վոր ճարտարական մարդու միանգամայն համոզիչ կերպով ապացուցեց, վոր ճարտարական մարդու մոցից սոցիալ-տնտեսական սիստեմը լիովին անրնդունակ է դիմարդել և իր անկախությունը պաշտպանել կազինալիստական Յեվրոպայի ճնշումից: Ղրիմի պատերազմը վերջին ավանտյուրիստական փորձն եր, վորով ցանկանում ելին հետաձգել ճորտատիրական տնտեսության թեկուղ և մասնակի լիկվիդացիան, և այդ պատճառով դրա կատաստրոֆիկ արդյունքը վերջին առիթին եր յերկը դասակարգային ուժերի հարաբերակցության արմատական փոփոխման, վորով պարմանավորվեց գյուղացիների պատագրության անխուսափելիությունը:

ԿՍԼՎԱԾԱՏԵՐԵՐԸ ՑԵՎ ԱՌԵՎՏՏՐԱ-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՌԵՖՈՐՄ ԵՆ ՊԱՀԱՆՁՈՒՄ

Ազնվականության ոպողիցիոն արամադրությամբ բռնված չերտերը, արդյունաբերական և առևտրական բուրժուազիան, անհանդատացած և ընկճամած Ղրիմի պատերազմի կատաստրոֆիկ վախճանից, հուզվեցին, աղմկալի կերպով շարժվեցին, կորուկ քրնաղատության յևնթարկելով գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական, մասամբ քաղաքական սիստեմը: Այդ դասակարգի միջավայրից, գլխավորապես ազնվականության միջավայրից, ակնեցին շարունակ ավելի բարձր ձայներ լսվել, վոր հաստատակամորեն պահանջում ելին ռեֆորմ, առաջին հերթին գյուղացիական ռեֆորմ, առաջին հերթին գյուղացիական ուժերի աճող ակտիվությունը ամեն որ մեծանում եր և, ինչ վոր ամենից ավելի շատ եր վախճանում ինքնակալությանը, նրանց միջև բացահայտ քաղաքական բլոկ եր նշվում միջին ազնվականության և խոշոր ազնվականության վորով չերտերի հեգեմոնիայով:

Միջին ազնվականության ղեկավար դերն այդ բլոկում այն բանով եր պայմանավորված, վոր նշված բլոկի բոլոր մասնակից-

ներից միջն աղնվականությունն իր տնտեսական դրության անելանելիության չնորհիվ*) հակված եր գեղի գյուղացիների աղատադրության հարցի ամենաարմատական լուծումը բլոկի ներռում։

Այսպիսով 50-ական թվականներում ստեղծվեցին որբեկտիվ պայմաններ, վարոնք կարծես թե պետք է դեկարբիստներից զավակալ-ներին» դրշելին վճռականորեն իրենց «Հայրերի» ուղին—հեղափոխության ուղին մտնել։ Ի տարրեկություն իրենց «Հայրերի» վրոնք 1825 թ. մի առանձնացած խմբակով հանդես յեկան, 50-ական թվականներում «Վորդիները» հենվում ելին իրենց դասակարգի խիտ մասսիվի վրա և յերկու դաշնակից ունեցին։ Բայց ըստ պասածին հակառակ՝ «Հեգեմոնը» շատ հեռու յեր վորեե հեղափոխական մտքից և պլանից։ Նրա ոպողիցիան շատ ավելի դժույն եր, քան նույն դարասկդրին միջին աղնվականության աջ թեկի ոպողիցիոն յելույթները։ Խոկ ինչո՞վ բացատրել բլոկի «Հեգեմոնի» յերկոչոտությունը։—Ամենից առաջ յերկրի բոլոր դասակարգային ուժերի այդ հարաբերակցությամբ։ Դեկարբիստների շարժումը զարդանում եր գյուղացիության թույլ շարժման ֆոնի վրա, ոպողիցիոն աղնվականության շարժումը 50-ական թվականներում զարգանում եր ընդհուպ մոտեցող գյուղացիական պատերազմի պայմաններում, վոր լիովին և ամբողջությամբ վազջ ազնըվականության դեմ ուղղված գյուղացիության հեղափոխության վերաճելու վորոշ շանսեր ուներ։ Այդ հեղափոխության վախն ել աղնվականության ոպողիցիոն շրջանների վոտն ու ձեռը կապեց, այդ նույն վախը ջլատեց առեւտրական և արդյունաբերական բուրժուացիայի քաղաքական ակտիվությունը, վորն իր ամենորյա փորձից դիտեր, թե լայն գյուղացիական շարժումն անխուսափելիորեն իր հունի մեջ կառնի նաև այն ժամանակի գյուղացիաբար տրամադրը ված արդյունաբերական բանվորներին։

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՌԵՖՈՐՄԸ.

Ինքնակալությունը հանձինս Ալեքսանդր Ա հիանալի հաշվառեց այդ պարագան։ Ուղարկելով լիբերալ ոպողիցիայի անվճուականությունից, մեծամեծների վորոշ շնորհերի շիռթվածությունից, վորոնք նույնչափ անհանդստացած ելին և վերանաս գյուղացիան հեղափոխությունից, և գյուղացիական ուժերից, Ալեքսանդր Ա նախաձեռնությունն իր վրա վերցրեց և հենվելով մի կողմից՝ մեծամեծների ավելի հեռատես շերտերի վրա, մյուս կող-

մից՝ ակտական աղաբարատի ամբողջովին հլու բյուրոկրատիայի վրա, ու Փորմի հարցը բացահայտ կերպով առաջինն ինքը դրեց։ Անդիտանալով ձախ և աջ ոպողիցիային, հմտորեն մանյովրների դիմելով՝ նա սկսեց արագորեն նախապատրաստել ու Փորմի կենաւագործումը։ Ալեքսանդր Ա այս համարձակ մանյովրով միջին աղնվականության ձեռքից խլեց նրա գլխավոր գենքը—«աղաբարագության դրոշը», ինչպես փարթամ կերպով անվանվում ելին աղնվական լիբերալ հապարակախոսների ճոռոմաբանությունները գյուղացիների աղատագրության անհրաժեշտության մասին։ Անդորմի անհրաժեշտության մասին ճոռոմաբանելու փոխարեն՝ Ալեքսանդր Ա առաջարկեց աղնվականությանը, բայց արդեն ամբողջ աղնվականությանը և վոչ թե միայն միջինին, ու Փորմի ռեալ նախադի քննության դիմել։ Յեկ այդտեղ շուտով ինքնակալությանը հաջողվեց յերկրորդ վոչ պակաս հաջող մանյովրն անել։ Ուտագործելով աղնվականության տարրեր խմբակների հակասական շահերը և միջին կալվածատերերի միջավայրում գոյություն ունեցող կենարոնախույս ճգուտնելու ինքնակալությունը նրանց ցըրիլ տվեց նահանգական կոմիտեներում, վորոնցում ամեն մի նահանգի աղնվականության առանձին խմբերը հանդես ելին գալիս ու Փորմի հատուկ նախագծերով, վոր հարմարեցված ելին նրանց տնտեսությունների առանձին տիպերի մասնավոր շահերին։ Այս չափագանց հաջող տաքտիկական քայլով ինքնակալությանը հաջողվեց քայլքայել աղնվականության ոպողիցիայի միությունը, վորից հետո արդյունաբերական և առեւտրական բուրժուազիյի անդրտի մենացած ոպողիցիային խաղաղացնելլ մեծ ջանք չեր պահանջում։ Մի շարք կոպիտ գոռոցներ և վուտիկանական ուեպրեսիաների լիովին բավական ելին արդյունաբերական և առեւտրական բուրժուազիային ուժությունից կողմից վրա ակտիվ ներգործություն ունենալու հնարավորությունից զրկելու։ Ըստ եյության, այսպես կոչված նահանգական կոմիտեների, ապա և խմբագրական հանձնաժողովների հիմնումից հետո բուրժուազիան դրա առանձին կարիքն ել չուներ։ Միջին աղնվականության առանձին խմբերը, վորոնք իրենց ու Փորմի սլլաններով նշանավոր չափով ավելի արմատական ելին բուրժուազիայի ամենալիբերալ շերտերից, ամբողջությամբ ու լիովին նահանգական կոմիտեներում և խմբագրական հանձնաժողովներում արտահայտում ելին ուսւական արդյունաբերական և առեւտրական բուրժուազիայի շահերը։

*) Տես նախորդ «Դեկարբիստներ» առաջադրությունը։

Այսպիսով ինքնակալությանը հաջողվեց ազնվականության և բուրժուագիայի պայքարը ոեփորմի շուրջը լեզար շրջանակների մեջ սեղճել, փաստապես այդ դասակարգերի պայքարը վերածելով՝ ազնվականության տարրեր խմբակների պայքարի նահանգական կոմիտեներում և խմբագրական հանձնաժողովներում, վորոնց դրույթ ելիմ կանդեած ճորտատիրական մեծամեծները:

ԳՅՈՒՂՍՏԻՍԿԱՆ ՇԱՄԺՈՒՄԸ.

Բայց դասակարգային պայքարը 50-ական թվականներում չլսահմանափակվեց ինքնակալության գծած շրջանակներով: Այդ շրջանակները շատ շուտով լայնացվեցին հեղափոխական դյուլացիոնիցից, կորը պայքարում եր վոչ թե ոեփորմի «Համար» նրա «Հուրջը», այլ ադրաբային—գյուղացիական հարցի հետևողական հեղափոխական լուծման համար, այսինքն իր իսկական դասակարգային շահերի համար:

50-ական թվականներում գյուղացիական շարժումը դյուլացիական հեղափոխություն չվերածեց, վորովհետեւ այդ շարժումը որյեկտիվ պայմանների չնորդիլ պարտության եր դատապարտությունիվ պայմանների համար առաջական պարտության անխուսափելությունը պայմանավոր հիմնական պատճառն այն հեղափոխական հասարակական ուժի բացակայությունն եր, վորը կարող կը լիներ այդ շարժումը դիմավորել և դրան հարկավոր քաղաքական ուղղություն և համապատասխան կազմակերպչական ձև տալ: Զրոնայած արդյունաբերության բավական արագ գարգացման, Ռուսաստանում 40-ական թվականներում արդյունաբերական պրոլետարիատի իրեն ինքնուրույն հասարակական ուժ գեռ դրյություն չուներ: Աղասի վարձու աշխատանք կիրառող կապիտալիստական չուներ: Աղասի վարձու աշխատանք կիրառող կապիտալիստական դուրսագրանի լանվոր գասակարգի մեծամասնությունը գեռ բահակարանի բարերար շերտերից, վոր մինչ ոեփորմյան Ռուսաստանում ձորտերից եր կաղմած: Իրավաբանորեն ազատ բանվորների քանակը, վորոնք հավաքագրվում ելին քաղաքի բնակչության սուրբին պրոլետարացող շերտերից, վոր մինչ ոեփորմյան Ռուսաստանում «մեշշանների» դասի մեջ եր մտնում, չափարանց քիչ եր, մորպեսդի կարողանար այն ժամանակի բանվոր դասակարգի շարժմանը յեթե վուտ պրոլետարական, գոնե «նախապրոլետարական» բնույթ տալ, ինչպիսին եր Ֆրանսիայի բան: շարժումը XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում և Գերմանիայինը՝ XIX դարի 30-ական թվականներում: 50-ական թվականներում

Ռուսաստանում բանվորների, գլխավորապես յերկաթուղարին շինարարության ասպարիզում զրազված բանվորների մեջ, նկատվում ե բավական լայն շարժում: Բայց այնուամենայնիվ հարկավոր ե ընդունել, վոր այդ շարժությը ինքնուրույն պրոլետարական բնույթից չեր կրում: Ինչքան, վոր Ռուսաստանի արդյունաբերական պրոլետարիատի հիմնական կաղերերը 50—60-ական թվականներում դեռ չերին «արդյունացիացել», այնքան 50-ական, 60-ական թվականների բանվորական շարժումը վոչ այլ ինչ եր, բայց յեթե ընդհանուր գյուղացիական շարժման մի ալիքը: 50-60-ական թվականների բանվորական շարժումը դեռ չեր կարող ընդհանուր շարժման մեջ կաղմակերպիչ և քաղաքական իմաստ մտցնել:

Ռուսաստանում 40-60-ական թվականներում քաղաքի մանր բուրժուազիայի դերը նույնքան չնչին եր և՝ վորակապես, և՝ քունակապես, ինչքան վոր դարասկրիպին: Միայն մանր-բուրժուական ինտելիգենցիայի կաղերերն արագ աճեցին: Բայց առանց իրենց դասակարգային շահերի գիտակցությանը մոտեցող արդյունաբերական պրոլետարիատի նշանավոր կաղերերի կամ առանց քաղաքի մանր բուրժուազիայի մասսայի նրանք քաղաքականապես անդոր ելին: Այս պատճառով այդ ինտելիգենցիան միայն կարող եր գյուղացիական հեղափոխության ականավոր ինելուզներ տալ, ինչպես Հերցենը կամ հատկապես Զերնիշեվսկին, բայց նա անզոր եր դասակարգային պայքարի տվյալ ետապում զատել դյուղացիական հեղափոխության կուսակցություն, գյուղացիական հեղափոխության իրեն բուրժուազիացիական, բուրժուազիական հեղափոխության պարզ հետեւղական ծրագիր և այդ թեորիական յենթադրությունները: Պրակտիկայում, ինչպես արդեն վերել մատանը գաւակարգի կարողանար այն ժամանակի բանվոր դասակարգի շարժմանը յեթե վուտ պրոլետարական, գոնե «նախապրոլետարական» ապագիտիան յետեւղական այնպիսին ապագիտիան յետեւղական, և այն մեղքը, վոր ժամանակավորագիտ կաղմակեց պրոլետարական բուրժուազիայի և ինքնակարությունները:

Այսպիսով, 50-60-ական թվականներում Ռուսաստանում միակ դասակարգը, վորի վրա թեորիական կարելի յեր հույս զնել իրեն հասարակական մի ուժի վրա, վորն ընդունուել եր զբլիւավորնել գյուղացիական հեղափոխությունը, արդյունաբերական բուրժուազիան եր: Բայց ոեփորմի ժամանակի դասակարգային ուժերի ոեալ հարաբերակցության վերլուծությունն արագ և վճռականապես հերքում ե այդ թեորիական յենթադրությունները: Պրակտիկայում, ինչպես արդեն վերել մատանը գաւակարգի կարողանար այն ժամանակի բանվոր դասակարգի շարժմանը յեթե վուտ պրոլետարական, գոնե «նախապրոլետարական» ապագիտիան յետեւղական ապագիտիան յետեւղական, և այն մեղքը, վոր ժամանակավորագիտ կաղմակեց պրոլետարական բուրժուազիայի և ինքնակարությունները:

թյան միջեւ 50-60-ական թվականներում, այնքան նեղ եր և կարճորյա, վոր գյուղացիական շարժումը չեր կարող մուտք դուրս մել այստեղ և լայնացնել այն, վորպեսզի պայքարի ընթացքում, թեկուղ այդ պայքարի սկզբի շրջանում, ուստ դործարանատիրոջը և ոսւա ցարին ճակատ առ ճակատ իրար դեմ հաներ: Այս պայմանների չորրէիվ ինքնակալությանը հաջողվեց մի շարք հաջող տակտիկական և քաղաքական մանյովիներով շատ արագ վերականգընել աղնվականության և բուրժուազիայի (առևտրական և արդյունաբերական) բոլոր խմբերի միացյալ Փրոնտը վերահստ դյուզացիական հեղափոխության դեմ և ուժորմի արագ իրադորձումով մեկուսացնել և պարտության դատապարտել լայն ծագարիոդ գյուղացիական շարժումը:

Սրանով և բացատրվում, վոր գյուղացիական շարժումը մեծագույն վերելքի հասավ ուժորմից հետո, յերբ գյուղացիությունը բացահայտորեն տեսավ, թե ինչպիսի «ազատագրություն» և պատրաստվում իր համար: Բայց այդ շարժումը, վորն իր թափով և բովանքակությամբ իսկական գյուղացիական պատերազմ դառնարուց հեռու չեր, արդեն ըստ ելության վոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական շարժում եր: Ոբեկտիվ պայմանների չնորհիվ, գասակարգային ուժերի հարաբերակցության ըրնորհիվ, գյուղացիությունը ուժորմից հետո փաստապես արդեն հանդես եր գալիս վոչ թե իրեն բուրժուազիուղացիական հեղափոխության նախամարտիկ, ինչպես այդ տեղի ուներ 1905 թ. հեղափոխության նախորյակին—1902-1904 թ., թ., այլ պաշտպանվում եր նոր կիսաճորտատիրական, կալվածատիրական եքսպրոպրիացիյց, վորը բուրժուական պատմաբանները փըսւն ձեզով գյուղացիական ուժորմ անվանեցին, իսկ Լենինը հանձնարարում եր դատակարգային ավելի մեծ պարզուության և պատմական ճշգրտության համար կալվածատիրական ուժորմ անվանել:

**ՀԵՏԻԵՖՈՐՄՅԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԵՎՈԼՅՈՒՅԻՍԻՅԻ ՅԵՐԿՈՒ
ՈՒՂԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ.**

Կալվածատիրական խմբերի պայքարը ուժորմի չուրջը լիովին և ամբողջովին ուղղված եր վերահստ գյուղացիական հեղափոխության դեմ, գյուղացիական հարցի հեղափոխական լուծման դեմ: Ինչքան ել վոր կալվածատերերի գանգան խմբերի միջեւ:

խորն ելին տարածայնությունները ուժորմի նախագծի քննության ընթացքում, վերջին հաշվով նրանց բոլորին միավորում և իրեւ մեկ ամբողջություն միասնական դասակարգային շահը, այն ե՛ռժորմը «վերեից» արագ իրագործելով, ապահովել, վոր կալվածատերը հնարավորություն ունենա կապիտալացնել իր տնտեսությունը և միաժամանակ այսպես անել, վոր ամեն կերպ հապազի գյուղացիական տնտեսության կապիտալացման տեմպն արագացնելու համար:

Նայած այն բանին, թե ինչ չափով այս կամ այն կալվածատիրական խումբն իր տնտեսության կապիտալացման շահերի տեսակետից կարիք ուներ, վոր իր տնտեսության կողքին գոյություն ունենա մինչկատարական մանը գյուղացիական տնտեսությունը, այն չափով ել նա պաշտպանում եր, վոր գյուղացուն թողնվի մինչունքորմյան հողաբաժնը կամ թե պահանջում, վոր փոքրացվի այն: Այսպիսի պայմաններում գյուղացիական տնտեսության մեջ կապիտալիզմը կարող եր հասունանալ խիստ սահմանափակ չափերով, դանուաղը ըստ տեմպի և խեղաթյուրված ըստ ձերի: Այսպիսի պայմաններում կապիտալիզացիան կհաջողվեր գյուղացիական վերին շերտերի միայն մի շատ փոքրիկ միջնախավին, լորին իր տնտեսավարության մեթոդներով շատ քիչ կտարբերվերի իրենց լիակատար տիրապետությունը պահած կարվածատերերից: Այսպիսի կապիտալիստ-գյուղացին հարկադրված կլիներ գլխավորապես ոգտուել մինչև կապիտալիստական շահագործման մեթոդներից, ինչպես որինակ՝ հողի և ինվենտարի դրամական և նատուրալ ստրկացուցիչ վարձակալությունից, վաշնառվական ստրկացումից և այլն: Այսպիսի ճանապարհով ընթացավ կապիտալիզմի դարձացումը Պրուսիայի գյուղատնտեսության մեջ, տարբերվելով մյուս տրամադրություն հակադիր ճանապարհից, վորով դարձացուվ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգների ֆերմերացին տնտեսությունը:

«Բուրժուական զարգացումը կարող է կատարվել, գլուխ ունենալով խոչը կալվածատիրական տնտեսությունները, վորոնք ստիճանաբար շարունակ ավելի բուրժուական են դառնում, աստիճանաբար շահագործման ճորտատիրական յեղանակները բուրժուականով են փոխարինում, այլ զարգացումը կարող է կատարվել նույնություն և գլուխ ունենալով մանը գյուղացիական տնտեսու-

թրունները, վորոնք հեղափոխական ճանապարհով հասարակական որդանիզմից հեռացնում են ճորտատիրական լատիֆունդիաների «պալարը» և ապա առանց դրանց ազատ զարգանում կապիտալիստական ֆերմերության ճանապարհով:

«Բուրժուական զարգացման որյեկտիվորեն հնարավոր այս յերկու ուղին մենք կանվանելինք պրուսական և ամերիկական տիպի ուղիներ: Առաջին դեպքում ճորտատիրական կարվածատիրական տնտեսությունը դանդաղորեն բուրժուականի, յունիկրականի յե վերածում, տասնյակ տարիներով գյուղացիներին դատապարտելով ամենատանջալի եքսպրոպրիացիայի և ստրկացման, նրանցից զատելով «գրոսբառերների» (խոչոր գյուղացիների) մի չնչին վրաբամանությունը: Յերկրորդ դեպքում կարվածատիրական տնտեսություն չկա, կամ այդ ջախջախվում և հեղափոխության միջոցով, վորը բանագրավում և մասնատում և ֆեոդալական կարգածները: Այդպիսի դեպքում գյուղացին դերիշտում և, դառնալով հողագործության բացառիկ գործակալը և եվոլյուցիակատարելով դեպի կապիտալիստական ֆերմերը: Առաջին դեպքում եվոլյուցիայի հիմնական բովանդակությունը հանդիսանում է ճորտատիրության վերածումը ստրկացման և կալվարիատական չահագործման ֆեոդալ-կարվածատերերի, յունկերների հողերի վրա: Յերկրորդ դեպքում հիմնական ֆոնը նահապետական գյուղացիության վերածումն է բուրժուական ֆերմերի» (Լենին, Աշխ. Ժող. հ. IX, էջ 443—444):

Իբենց համար ազրարային եվոլյուցիայի պրաւական ուղին ապահովելի ել հանդիսանում եր համարյա բոլոր կալվածատերերի հիմնական խնդիրը ոեփորմի ժամանակ:

Ասում ենք «համարյա» վոչ թե այն պատճառով, վոր կարվածատերերի մեջ զարգացման «ամերիկական» ուղիի կողմանակիցներ կային, —այդպիսի խմբակորման մասին խոսք ել չկար: Բայց դրա փոխարեն կար մի փոքրաթիվ խոսք, վորը փորձում եր պաշտպանել աղքարային եվոլյուցիայի յերրորդ միջնական և պատմականորեն վոչ բնորոշ տիպը, անգլիականը, վորը պրուսական ուղիի այլաստեսակությունն է միայն:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԵՎՈԼՅՈՒՑԻՑԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏԻՊԸ.

Զարգացման այս ուղիի եյությունն այն է, վոր կարվածատերը հրաժարվելով իր սեփական գյուղատնտեսությունը, հատ-

կապես հացահատիկային տնտեսությունը վարելուց, իր ձեռքին և սրահում ամբողջ հողի*), այդ թվում նաև գյուղացիական հողաբաժնների, սեփականության իրավունքը և այդ հողը վարձակալության և տալիս մանր Փերմերներին: Այս ուղիով ընթացավ աղքարային կապիտալիզմի զարգացումն Անգլիայում: Բայց աղքարային եվոլյուցիայի այսպիսի ուղի հնարավոր եր միայն Անգլիայում պատմական պայմանների յուրատեսակ զուգակցության չնորհիլ, վորոնց հետևանքով կապիտալիզմի ուղիի հեղափոխական առաջին գտումը—Անգլիական մեծ հեղափոխությունը—տեղի ունեցավ արդյունաբերական կապիտալիզմի լայն զարգումից հարյուր տարի առաջ: Խսկ, յերբ սկսվեց արդյունաբերական կապիտալիզմի բուռն զարգացումը, այն ժամանակ զարգման այսպիս կոչված անգլիական ուղին սկսեց մոտենալ պրուսականին միայն այն տարբերությամբ, վոր պրուսական յունկերը հետզետե գյուղացիներին քչում եր նրանց հողից իր կապիտալիստական գյուղատնտեսությունը, գլխավորապես հացահատիկային տնտեսությունը, վարելու համար, իսկ անգլիական լենդուրովը քեց իր հողի վարձակալներին—մանր ֆերմերներին—արդյունաբերական անառնապահությամբ զարգվելու համար: Կապիտալիզմի զարգացման և հացահատիկի ներքին տարողունակ չուկայի ստեղծման հետ անգլիական լենդուրովերը—հողի մոնոպոլ և կափականատերերը—սկսեցին հողը վարձակալության տալ բարձր բացարձակ հողացին ունչվող ֆերմերներին:

Թուսաստենում, վորտեղ գյուղատնտեսական կապիտալիզմի ուղիի առաջին, այն ել վոչ հեղափոխական գտումը տեղի ունեցավ XIX դարի կիսում, յերբ կապիտալիզմը զարգացման բարձր մակարդակի հասավ յերկրների մեծ մասում և հենց թուսաստենում ել մի չափ հենակեակը գրավեց, աղքարային եվոլյուցիայի անգլիական տիպի համար վոչ մի նախագրյալ չկար, բացի խոչոր բահրուցին կարվածատերերի մի փոքրաթիվ խմբակի ցանկությունից, վորոնք այլի մեծ չափով փարբեկագործարանային տրդյունաբերության հետ ելին կարված, քան գյուղատնտեսության:

*) Բատ պաշտոնական այլակների, 70-ական թվականներում 900 խոչը սեփականատերեր տիպում ելին Անգլիայի հողերի $\frac{1}{3}$, 500—իրանդայի հողերի կեսը և 600—Շոտլանդիայի հողերի $\frac{4}{5}$: Գյուղացիության հողային սեփականությունը կազմում եր Անգլիայի, իրանգիայի և Շոտլանգիայի ամբողջ հողային Փոնդի 40% :

Թուամստանում հնարավոր եր միայն յերկու ուղի—պրուսականը, կամ ամերիկականը: Ռեֆորմի տարիներում կալվածատերերի և գյուղացիների միջև պայքար եր ուղի ունենում այս յերկու ուղին համար: 1861 թ. ռեֆորմով կալվածատերը ձգում էլին ապահովել բոլոր պայմանները, վոր իրենց տնտեսությունը պարզանա առաջին ուղիով:

Եռո 30-ական թվականներում Ռուսաստանը ձուլում եր չուդունի համաշխարհային ընդհանուր արդյունահանության (90 միլ. փութ) մոտ 12 տոկոսը և առաջ եր Բելգիայից, Պրուսիայից և Միացյալ Նահանգներից: 1859 թ. Ռուսաստանի բաժինը կաղմում եր չուդունի համաշխարհային ձուլութի (460 միլ. փութ) միայն մոտ 4 տոկոսը:

Անցյալ (XVIII) դարի կիսում յերկաթը մեր արտահանության ամենագլուխվոր առարկաներից մեկն եր: 1760 թ. Ռուսաստանից արտասահման եր տարված 820 հազար փութ յերկաթ, 1793—1795 թ. թ. տարեկան արտահանությունը հասնում եր արդեն 2966 հազար փթի: Այդ ժամանակից յերկաթի արտահանությունը ոկտոսը ե արագ նվազել (հատկապես 40-ական թվականներից) և 1851—1860 թ. թ. իջնում ե տարեկան մինչև 747 հազար փթի:

Իսկ ի՞նչ՞ո՞ց եր կախված մեր յերկաթաշինական արդյունաբերության այսպիսի վողբալի դրությունը:

Մինչև 1861 թ. ռեֆորմը լեռնադործարանային արդյունաբերությունն ամբողջովին հիմնվում եր հարկադրական աշխատանքի վրա: Չուդուն ձուլելու արտադրության գլխավոր կենտրոնը հանդիսանում եր Ռւբալի լեռնային ըրջանը—Պէրմի և նրան սահմանակից նահանգները: Ռւբալի լեռնային գործարաններում եր ձուլում ամբողջ սուսական յերկաթի մոտ չորս հինգերորդը: Այդ գործարանների բանվորների գլխավոր կոնտինդենտը կազմում է ի՞ն գործարաններին կցված դյուլացիները և արհեստավորները:

Հարյուր հաղարավոր մարդկանց լեռնային գործարաններին ամբացնելը բցիսում եր կառավարության այն ցանկությունից, վոր անհրաժեշտ և պաշտպանել այդ գործարանները և նրանց համար բանվորական ձեռքեր ապահովել: Յեվ իրոք, այդ միջոցի չնոր-

հիվ մեր յերկաթագործական արդյունաբերությունն արագ դարձավ, և XVIII դարի վերջում Ռուսաստանն այդ տեսակետից հետ չեր մնում Անդլիայից: Բայց հենց նույն պատճառը, վորը XVIII դարում նպաստում եր լեռնադործարանային արդյունաբերության աճմանը, XIX դարում հանդիսանում եր նրա զարգացման ամենամեծ արգելակը: Մեր յերկաթագործական արդյունաբերության լացման պատճառների հարցով զբաղվող 50-ական և 60-ական թվականների գրողները մեկ յեզրակացության եյին դամբու, վոր այդ լացումն առաջացել եր չուդուն ձուլելու դործի տեխնիկական հետամնացությունից, չուդուն և յերկաթ ձուլելու նոր լավացրած յեղանակներ չգործադրբելուց, վորոնց չնորհիվ յերկաթագործական արդյունաբերությունն այնպիսի արագ հաջողություններ և ունեցել Արևմտյան Յեվրոպայում:

Այդ տեխնիկական լացումիցից եր առաջ գալիս յերկաթի գնի անշարժությունը Ռուսաստանում, մինչդեռ, որինակ, Անդլիայում յերկաթի գինն արագ ընկնում եր: Այսպէս, Ս. Պետերբուրգում 1824—1826 թ. թ. մեկ փութ յերկաթն արժեր 1 ռ. 26 կ. արծաթով, իսկ 1848—1850 թ. թ.—1 ռ. 27 կ.: Իսկ անդլիայում այդ նույն ժամանակամիջոցում յերկաթի գինը 60 տոկոսով իջավ:

Մի քառորդ դարի ընթացզում ուսւական յերկաթի գինը բոլորովին չցածացավ, իսկ անդլիականինը, ինչպես ասացինք, 60 տոկոս իջավ: Հասկանալի յեր կարպիսի պայմաններում ուսւական յերկաթի արտահանությունը պետք է կրծատվեր, իսկ յերկրի ներսում յերկաթի վաճառքը չեր աճում:

Իսկ ի՞նչ՞ո՞ց եր կախված ուսւագկան յերկաթագործական արդյունաբերության տեխնիկական հետամնացությունը:— Կասկած չի կարող լինել, վոր այդ հետամնացության հիմնական պատճառը հարկադրական աշխատանքի սիստեմն եր:

Քանի ուն բանվորը յերկաթի գործարաններում մտրակի տակ եր աշխատում, նրա աշխատանքի արտադրողականությունը չեր կարող պլրողը անել: Վոչ մի արտօնություն չեր կարող փոխարինել արդյունաբերական պրոցեսի հիմնական պայմանին— աշխատանքի աղատությանը:

Ամենեին սոսկ պատահականություն չեր, վոր արտադրության այն ճյուղում, վորն այնպես արագ զարգանում եր մինչև Փորմյան նույնացում— բամբակեղենի արտադրության մեջ— ձորտական աշխատանքը (ինչպես ներքեւ կատանենք) համարյա բացակայում եր: Հենց աղատ աշխատանքի չնորհիվ բամբակեղենի ե-

չթի արտադրությունը ճորտատիրական թուսաստանում՝ ընդհանուր լճացման մեջ՝ այնպիսի արագ հաջողություններ ունեցավ:

Այսպես ուրեմն, մինչև փորմյան թուսաստանի արդյունաբերության զարգացման ուսումնասիրությունը մեղ հետեւյալ հետեւթյուններին ե բերում:

XVIII դարի առաջին կիսում գործարանային արտադրության արդյունքների կարեռագույն սպառողը պետությունն եր. դրանով ել վորոշվում եր այն ժամանակի խոչը արդյունաբերության ամբողջ կազմը: Խոշոր արտադրությունը ծաղեց կառավարության անմիջական պաշտպանությամբ և սկզբում չեր կարող կառավարվել առանց այդպիսի պաշտպանության: Այն ժամանակի սոցիալական պայմաններն անհարժեշտ ելին դարձնում բանվորների ամրացումը ֆաբրիկաներին, վորովհետեւ աղասի վարձով գտնել չեր կարելի: Հարկադրական աշխատանքը տեխնիկայի ցած մակարդակի հետեւնքով ավելի շահավետ եր, քան աղասի աշխատանքը: Այդ պատճառով արդյունաբերության այն ճյուղերը, վորոնցում բացառապես կամ առավելապես անաղատ բանվորների աշխատանք եր գործադրվում, XVIII դրում նշանավոր զարգացման հասան և գարավելքին վոչ միայն կարող ելին բավարարել ներքին շուկայի պահանջները, այլ նույնիսկ աշխատել արտասահմանյան վաճառահանության համար: Մշտիկած շնովածքները մեր արտահանության մեջ այն ժամանակ նշանավոր չափով ավելի մեծ դեր ելին խաղում, քան յերբեք հետագայում:

Արտահանության մոտ $\frac{1}{3}$ ընկնում եր ուռւսական արդյունակությունը արդյունաբերության պրոցուկաներին: Յերկաթի արտահանությունն ըստ իր արժեքի հավասար եր ամբողջ ուռւսական արագործի համարյա 13 % :

XIX դարում դրությունը փոխվում է: Արդյունաբերությունը վճռականացես գերածում ե՝ դուրս գալով պետական պահանջի շրջանակներից: Ծագում ե արտադրության մի նոր ճյուղ՝ բաժանելու արտադրությունը (առանց կառավարական վորեւ պաշտպանության, բացի մաքսային հոփանավորությունից) և անսովոր արագությամբ տիրում ե ուռւսական ներքին շուկան, դուրս մղելով կտավի հնորյա արդյունաբերությունը: Արեվմայան Յեղապայում տեղի յե ունենում արտադրության տեխնիկայի խորը փոփոխություն, և մեքենան փոխարինում ե ձեռքի աշխատանքը: Ճորտատիրական աշխատանքը, վոր անհամատեղելի յե տեխնիկա-

կան նոր պայմանների հետ, վճռական արգելակ և գառնում արդյունաբերության համար: Արտադրության այն ճյուղերը, վորոնցում ճորտատիրական աշխատանքը շարունակում ե լշխել, գաղարում են դարձանալուց: Յեվրոպան տեխնիկական տեսակետից արագությունը մեղանից առաջ ե ընկնում: մշակված շինվածքների արտահանությունը թուսաստանից բացարձակորեն կրծատվում է, իսկ հարաբերականորեն— բոլորովին չնչին մեծության հասնում:

Արդյունագործող արդյունաբերության պրոդուկտները կաղմաւմ են 1848—1850 թ. ուռւսական եքսպորտի ընդհանուր արժեքի մոտ 9 % : Ճորտատիրական իրավունքն սկսեց ճնշող ներգործություն ունենալ յերկրի ընդհանուր տնտեսական և մասնավորապես արդյունաբերական զարգացման վրա և այդ պատճառով վերացվեց:

(Տուր-Բարանովսկի—Ռուսական ֆաբրիկա)

ՃՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԱՏ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐԴՆՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ինչքան աճում եր քաղաքների բնակչությունը, տարածվում քաղաք աշխատանքի գնալը, արդյունաբերական ուսունում կուային սիստեմը դուրս մղվում բահարյին սիստեմի միջոցավ, այնքան գործարաններում աճում եր աղասի աշխատանքից ոգտավելը: XIX դարի սկզբին գործարաններում աղասի վարձու բանվորների քանակը հավասար եր բոլոր բանվորների մոտավորապես 48 % :

Գործարանների թիվը	Բանվորների թիվը	Այդ թվում աղասի	Վեց թվում աղասի
1804 թ.	2423	95202	45025

Արտադրության առանձին տեսակներում աղասի վարձու բանվորները և պարտադրյալ բանվորները հետեւյալ ձեփով ելին բաշխվում:

Գործարանների թիվը	Բալոր բանվ. թիվը	Այդ թ. աղասի	Մեկ գործար. թիվը
գործարաններ .	155	28689	2788
Քաթանի գործ.	285	23711	14327
Չթի և միտկալի			83
գործարաններ .	199	6566	5436
Մետաքսի գործ.	328	8953	6625
			27

Թործարան.	Բոլոր բանվ.	Այդ թ.	աղաս	Մեկ գործար.
Թիվը	Թիվը	վարձու թ.	բանվ. միջ.	թ.
Թղթի գործար.	64	6957	1533	109
Պողպատի, ասե-				
ղի և յերկաթի				
գործարաններ.	26	4121	1144	159
Կաշու գործար.	850	6304	6115	7
Ճոպանի գործ.	53	1520	1295	26
Ապակու և բյու-				
բեզի գործար.	14	3937	1685	35

Տեսնում ենք, վոր XIX դարի սկզբում արտադրության վորչ ճյուղեր համարյա բացառապես հիմնված ելին հարկադրական աշխատանքի վրա, իսկ մյուսներում վճռականորեն գերիշխում եր աղատ աշխատանքը: Առաջինների թիվն ելին պատկանում էահուղի, թղթի, յերկաթի, ասեղի և պողպատի գործարանները. վերջինների թիվն ելին պատկանում չթի, միտկալի, մետաքսի, կաշու և ճոպանի գործարանները: Քաթանի և ապակու գործարանները միջին եղն ելին բոնում, անաղատ բանվորների տոկոսը նրանցում 50-ի մոտ է:

Արդեն XIX դարի սկզբում բոլոր գործարանային բանվորների մոտ կեսն աղատ վարձով եր աշխատում: 1825 թ. բոլոր գործարանների թիվը հավասար եր 5261, բանվորների թիվը— 210583, այդ թվում աղատ վարձու բանվորները— 114515:

Վոչ մի կասկած չկա, վոր անաղատ բանվորների հարաբերական թիվը գործարաններում արագ նվազում եր 30-ական և 50-ական թվականների ընթացքում: Այդ յերեւում ե այն բանից, վոր այդ ժամանակամիջոցում հատկապես զարգացավ արդյունաբերության այն ճյուղը, վորի մեջ աղատ վարձու աշխատանքը հենց նրա ծագման որից գերիշխում եր, այն ե՝ բամբակեղենի արդյունաբերությունը: Բամբակամանածային, մանածագործական և չթի գործարաններում բանվորների թիվը 1836 թ. արդեն 105878 եր (այն ժամանակ, յերբ գործարանային բանվորների ընդհանուր թիվը 324203 եր): 1804 թ. բամբակագործական ֆաբրիկաներում դրամված եր ամբողջ գործարանային բանվորների 7%, 1825 թ.— 21%, 1836 թ.— 32%:

Բամբակագործական արդյունաբերության աճման հետ պետք ե աճեր նաև աղատ վարձու բանվորների թիվը: Ապա, մահուղի արտողբության մեջ, վորտեղ ճորտային աշխատանքը ամենամա-

չափով եր կիրառվում, 30-ական և 40-ական թվականներին համապես ուժեղացավ բարակ և միջին մահուղի մշակումը, վորոնց համար գլխավորապես աղատ աշխատանքը ելին դործարդում: 40-ական թվականներում աղատ վաճառքի համար պատրաստվեց մոտ 9 միլիոն արշին մահուղի, իսկ պետության համար— մոտ 4 միլիոն արշին: Իսկ ճորտային աշխատանքը համարյա բացառապես գործադրվում եր զինվորի մահուղի պատրաստելու համար: Աղատ վաճառքի համար մահուղի պատրաստող գործարանները գլխավորապես պատկանում ելին վաճառականներին և արդեն այդպիսով հարկադրական աշխատանքից ոդտվել չելին կարող:

Ճորտային աշխատանքով բանեցվող գործարանների թվի կը մատումն անմիջականորեն ապացուցվում է աղնվականների պործարանների հարաբերական թվի նվազումով: Այսպէս, 1832 թ. աղնվականների գործարանների թիվն եր 862, ըստ յուցակի բոլոր գործարանների թիվն եր 5599: Հետևաբար աղնվականների գործարանները կազմում ելին ընդհանուր թվի վոչ ավելի քան 15%: Հակառհառվենի ասելով՝ 40-ական թվականների վերջում աղնվականներին պատկանում եր միայն 50 գործարան, իսկ այս ժամանակ բոլոր գործարանների թիվը մոտ 1000 եր, ուրեմն աղնվականների գործարանների տոկոսն իջել եր 5: Ճիշտ է, աղնվականների գործարաններն ընդհանրապես ավելի խոշոր ելին, այնուամենայնիվ 40-ական թվականների վերջում նրանց համեմատաբար ընչել թվից պետք ե յեղակացնել, վոր այդ ժամանակ գործարաններում ճորտային աշխատանքը վճռականում եր աղատ վարձու աշխատանքի առաջարկում է աղատ վարձու աշխատանքի առաջ: Այս վորոշակի մատնանշում է նաև Հակառհառվենու: «Ներկայումս,—ասում է, այդ կոմպետենտ հեղինակը,—գործարանների մեծ մասում գործադրվում են վոչ թե սեփական ճորտերը, այլ կամովին վորոշ վճարով վարձող բանվորներ»:

Վերջապես, մեղ հաստատ հայտնի յե, վոր 40-ական թվականներում մի ամբողջ շարք զանազան տեսակի գործարաններ հարկադրական աշխատանքից աղատ աշխատանքի անցան այն նկատումով, վոր վարձու աշխատանքը աղնվական արժելի շահավետ եր, քան պարտադիրը:

Մեր առաջները նկատի առնելով կարելի յե դրականապես պնդել, վոր աղատ վարձու աշխատանքն արագ տարածվում եր մինչունդորման Ռուսաստանի գործարաններում: (Տուգան-Барановский—Русская фабрика)

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՈՒՄԸ

ՃՈՐՏԱԾՐԻՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎԱՐՈՒՄԸ

ՃՈՐՏԱՎԱՐՈՒՄԸ

Ճորտ գյուղացիության վերնաշերտը վոտչինային կյանքի բուր ասպարեզներում խոշոր տեսակարար կշխո ուներ : Նրա հարըստացման սկզբնական ազբյուրը գյուղական մեծագնորդի և դյուզական բնակչության ու վաճառքի չուկայի միջեվ միջնորդի գործունելությունն եր : Կաստրոմայի նահանգի գյուղացիների մթերած փայտեղենը, Նիժնի-Նովգորոդի տնայնադորձների պատրաստած մետաղալարե շինվածքները, Կալուգայի բահրասու գյուղացիների շինած բահերը և այլ գործիքներն ընկնում են գյուղական հարուստների ձեռքը և վաճառահանվում հարյուրավոր ու հաղարավոր վերսու հեռու իրենց արտադրված վայրից : Տեղական գյուղացիական շինվածքների մատակարարումով սպասարկելով քաղաքացին կապիտալին, ճորտ գյուղական բուրժուազիան սպասարկում և նաև տեղական գյուղացիական սպասողին, տեղական գյուղական պահանջի բավարարման գործում միջնորդ հանդիսանալով նրա և քաղաքացին այդ խոշոր կապիտալի միջն :

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՐ

Ճորտ գյուղական բուրժուազիան մեծագնորդի գերով չի բավականանում, և արդեն տեղական գյուղացիական զրադմունքները կազմակերպողի ավելի բարձր աստիճանին և անցնում : Նա կանխագծաբներ և տալիս կատրոմայի նահ . փայտահատներին նրանց փայտի մթերումների համար, վարձում եկալուգայի նահ . գյուղացիներին, վոր թղկու շինվածքներ պատրաստեն այդ նարատակով զնված պուրակներում, փող և փոխ տալիս, նյութեր հայթային նիժնի-Նովգորոդի տնայնադորձներին և կազմակերպում մետաղարի շինվածքների սեփական մասսայական պատրաստում, իր համագույղացիներին կիսավարձու և հաճախ նույնիսկ ուղղակի վարձու բանելուներ գարձնելով : Այնուեղ, վորտեղ տնայնադորձական պատրաժության բացակայությունը չի թույլատրում տնայնադորձական աշխատանքի շահագործումով հարստություն դիմել, տեղական ճորտ բուրժուազիան իրեկ «բանվոր վարձող» և արտելչիկ գրաղվում եր իր համագույղացիների և հարեւանների բանվորական ուժի յուրատեսակ վաճառքով կամ կրկնավաճառքով, հանդեռ միջնորդի գերում գյուղացիների դերում, վարչությունը մասսայական պատրաստում և խոշոր գարձում

կանական կապիտալի միջն, կամ թե ինը կաղմակերպելով բավական խոշոր կապակներ : Բայց այն դեպքում ել, յերբ արհեստացին զբամունքների առանձնահատկությունների հետեւանքով հարուստ գյուղացիների համար անհնար եր լինում հանդես գալ անմիջական կազմակերպչի և տնօրենի դերում, զրա վորիսարեն նրանք վաշչառվածիների գյուղությունների միջոցով յուրացնում եյին գյուղացիական գյուղատանքը մշտապես լիսակատար կերպով յեր լինում համեմատարար փոքրաթիվ, բայց փողի իշխանություն ունեցող և դրանից ոգում կարողացող գյուղական բուրժուազիայի մի խմբակին : Բընակչության արհեստագործական կյանքի վորեւ ձյուղը տիրելով, , ճորտ հարուստները ձգտում եյին մյուսներն ել իրենց ձեռքը համարել :

ՃՈՐՏ ԲՈՒԽՃՈՒՍՑԻԱԿԱՆ ԱՐԵՎԱԴՐԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնողինելով փայտե շինվածքների մթերումը և վաճառքը, կառարամայի նահ . հարուստ գյուղացիները բաց են անում սեփական ներկի գործատներ, սպասարկելով տեղական գյուղացիական պահանջները : Մետաղալարե շինվածքների արտադրությունը և վաճառքն իրենց յենթարկելով, Նիժնի-Նովգորոդի նահ . գյուղական հարուստները գրաղվում են փայտի և հացահատիկի գնումով և փոխարկելով, Վոլգայի վրանավեր պահելով, մրգեղենի այդիներ տնկելով և այլն : Հողը չեր կարող դուրս մնալ ճորտ բուրժուազիայի տեսողության դաշտից և հասողությունից : Իրենց տնտեսական առավելություններից ոգովելով, ճորտ հարուստները վոչ միայն ասպահում եյին իրենց համար ծխային հողի լավագույն կտորները, վորակասրի լավացնելով իրենց հողոգտագործման տարածությունը, այլ և քանակազես լայնացնելով այն, ուժապահս տընտեսատերելով խելովն նրանց ծխապատկան հողաբաժինները և ուղղակի հողից ոգովելու իրավունքից զրկելով իրենց բազմաթիվ պարտապահներին : Հարուստ գյուղացիները բանվորական ուժի պակաս չեյին զգում : Բացի ճորտացրած պարտապահներից և անմիջական ուղղակի վարձման զեւքքերից ճորտ բուրժուազիան ողովում եր արարութիվ վճարումներ ունեցող գյուղացիների աշխատանքից, վորոնք տուրքը մուծել չեարողանալու հետեւանքով կամ իրենք եյին հարկադրված լինում մշտեկան համագույղացիների մոտ, վորոնք նրանց փոխարեն տուրքէ մուծումներն

անում ելին, կամ թէ հարկադրաբար և մինույն պարմանով իրը մշտկ հանձնվում ելին այդ հարուստներին: Գործադրվում եր նաև ավելի աղքատ համագյուղացիներին հողի կիսովի և աշխատավճարով տալը, հատկապես և առավելապես սեահողի ուսուներում, վորան հարուստ գյուղացիները կարգածատիրոջից վարձակալում ելին յերեմն մի քանի տասնյակ և ուսունի մի քանի հարյուր դեստինի հասնող շատ նշանավոր հողամասեր:

Ճորտաստիրական գյուղը ազգեցիկ, յեռանդում և գիշատիչ ճորտ գյուղական բուրժուազիայի անդադրում և յեռուն գործունեյության ասպարեզն եր հանդիսանում բուրժուազիա, վորն իր կարող և կպչուն ձեռքն եր գցել կոտակիման բոլոր տեղական աղբյուրները, անինա շահագործում եր իր համագյուղացիներին, անհամատալի չափով նրանց խճճել եր ստրկացուցիչ գործարքներ և փոխառվությունների ցանցում և վորի տարբեր խմբերը հաճախ կատաղի և աղմկալի պայքար ելին մղում իրարդեմ: (В. Кашин—Экономический быт и расслоение деревни в XIX в. «Звезда» № 1, 2, 3, 1926 г.)

ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

ԲԵՐԵՆՔ ՏՐՈՒՄԻց կու աղյուսակը հողատերերի քանակի մասին, վորոնք իրենց ունեցած ճորտերի թվի համաձայն վեց խմբի յև բաժանելած.

Բաս 8-րդ ռեփիզիայի

	Աղյուսական միավոր	0/0	Նորոշություն դաշինություն	0/0	1 աղյուսական միավոր
Անկալված	17763	14,0	62183	0,6	3
Մինչև 20 ճորտ ունեցող .	58457	45,9	450037	4,1	8
21 մինչև 100 »	30417	24,0	1500357	13,9	49
101 » 500 »	16740	13,2	3634194	33,9	217
501 » 1000 »	2273	1,8	1562831	14,5	688
1000 ավելի »	1453	1,1	3556959	33,0	2448

Բաս 10-րդ ռեփիզիայի

	Աղյուսական միավոր	0/0	Նորոշություն դաշինություն	0/0	1 աղյուսական միավոր
Անկալված	3663	3,5	12045	0,1	3
Մինչև 20 ճորտ ունեցող .	41019	39,5	3275534	3,1	8
21 մինչև 100 »	35498	34,2	1666073	15,8	47
101 » 500 »	19930	19,2	3925102	37,1	197
501 » 1000 »	2421	2,3	1569888	14,9	648
1000 ավելի »	1382	1,3	3050540	29,0	2207

Այս թվերից յերեվում ե, վոր կրճատում տեղի յե ունեցել 20-ից պակաս ճորտ ունեցող կալվածատերերի խմբում և այն խմբում, վորն 1000-ից ավելի ճորտ ուներ, և այդ կրճատումը վերաբերում է ինչպես կալվածատերերի թվին, այնպես ել նրանց ունեցած ճորտերի թվին: Բնդհակառակը, թե կալվածատերերի և թե նրանց ունեցած ճորտերի թվի մեծացում տեղի յե ունեցել այն խմբում, վորոնք ունեցին 20 մինչև 1000 ճորտ:

Դատելով մեկ կալվածատիրոջն ընկնող ճորտերի քանակից, վոչ միայն կալվածների համակենտրոնացում չե կատարվել, այլև ավելի շուտ նկատվում է կալվածների մանրացման միտում: Առաջին յերկու խմբի բացառությամբ, վորոնցով մեկ կալվածատիրոջ ընկնող ճորտերի քանակը չե կալվածատիրոջն ավելի քիչ ճորտ եր ընկնում, քան 8-րդ ռեփիզիայի ժամանակ: Այս յերեվույթը հատկապես նկատելի յե վեցերորդ խմբում (1000 ավելի ճորտ ունեցողներ), վորոնք մեկ կալվածատիրոջ ընկնող ճորտերի քանակը և՛ տոկոս կրճատվեց, և չորրորդ խմբում (100 մինչև 500 ճորտ ունեցողները), վորոնք այդ կրճատումը 9 տոկոս բարձր ե, հինգերորդ խմբում մեկ կալվածատիրոջ ընկնող ճորտերի թվի կրճատումը համառ է միայն 6 տոկոսի:

(И. И. Игнатович—Помещичье крестьяне накануне освобождения)

ՊԼԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՅՈՒՂԱՅԻ ՇԱՄԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՌԵՖՈՐՄԻ ՆԱԽՈՐԾԱԿԻՆ

Փանդարմեների պետի զեկուցումից ցարին 1858 թ.

«...Վորոշ աղնվականներ.. գուրս եյին գալիս այն զդուշության սահմաններից, վոր պահանջում են այժմյան հանդամանքները: Վորանք գյուղացիական ագրարակները տեղափոխում եյին նոր վայրեր կամ փոխում եյին նրանց հողաբաժինները, վորանք եւ գյուղացիներին վերաբնակեցնում եյին իրենց մյուս կալվածները, զիջում եյին նրանց առաջատանքների կալվածատերերին վոչ միայն չնչին զնով, այլև ձրի. մյուսները գյուղացիներին աղատ եյին արձակում առանց հողի և նրանց ցանկության հակառակ նրանց նորակոչել եյին ուղարկում ի հաշիվ ապառա զորաժողովների, ուղարկում եյին բնակության Սիրիք. մի խոսքով, ընդհանրապէս զանազան միջոցներ եյին գործադրում, վոր փրկվեն ավելորդ մարդկանցից և ինչքան հնարավոր և քիչ մարդկանց հողաբաժին տան: Ընդ ամին վորոշ, սակայն շատ սակալվաթիվ կալվածատերեր, նախկին կառավարման ձեվը չփոխելով, իրենց անպրդարացի և դաժան վարժունքներով գյուղացիներին համբերությունից հանում եյին: Գյուղացիներն իրենց հերթին իրենց վիճակի հեղաշըման սուլասելով՝ լարված կացության մեջ են և կարող են վորեն արտաքին առիթից հեշտությամբ գրգռվել: Ինչպես կալվածատերերն են արտահայտվում, գյուղացիների ձեռքերը թուլացել են և նրանք չեն ցանկանում յեռանդով վոչ մի բանի կպչել: Շատերն աղատությունը սանձարձակության իմաստով են հասկանում, վոմանիք կարծում են, վոր հողը նույնիքան իրենց եղանակում է պատկանում աներն ու աղարակները: Ինչպես կալվածատերերը վախենալով հողի ցրվածությունից և (չերեսոլոսից) ցանկանալով հարեան ունենալ անտոեր-գյուղացիներին, ամենից ավելի առարկում են նրանց աղարակներ զիշելու գեմ, այսպես եւ գյուղացիները չեն կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ նրանք պետք է հետ գնեն այն աղարակները, վոր իրենք են չինել-արքել և վորոնց մեջ ապրել են իրենց հայրերն ու պապերը: Այժմ ամենից շատ պատահող անկարգություններն այն են, վոր ձորտերը կամ խուսափում են բահրա վճարելուց և այլ պարհակներից, կամ չեն հնարանդվում գյուղացիներին (տարօտակ) և հենց կալվածատերով: Մի ամբողջ շարք գյուղերի հուգմունիքներ, վորոնց

ննշումը պահանջեց նահանգական բարձրագույն իշխանությունների անձնական գործողությաններ կամ գորախմբերի աջակցություն, տեղի եյին ունենում այնտեղ, վորաեղ կալվածատերերն իրենց կարգադրություններն անելիս՝ չեյին հարմարվում ներկայիս ժամանակի վագուն կամ վորաեղ գրդիչներ եյին յնրեան գուլիս: Այսպիսի քիչ-շատ կարենոր հուզմունքներ տարբար ընթացքում տեղի ունեցան 25 նահանգում: Թեև անհետպան դեպքերը միշտն հաշվով բավական շատ եյին», բայց ընդարձակ կայսրության մեջ դրանք համարյա աննկատելի յեն: Յեթե ուշադրության առնենք դյուլացիների հնագանդությունը կալվածների մեծ մասում, ապա կարելի յի ասել, վոր ընդհանուր հանդասությունը պահպատ և և վոր միթքն այժմ անկարգություններ անհանդմատ ավելի քիչ են տեղի ունեցել, քան սպասում և գուշակում եյին»:

«...Եւ ավելի հետաքրքրական ե այսպիսի մի յերեսույթ, հատկապես նրանց համար, ովքեր սովորել են կարծել, վոր մեր գյուղացիական շարժումը բոլորովին անմիտ, «տարերացին» եր: Հուսահատ պայքար եր տեղի ունենում գյուղական իշխանության համար ութիորմի մոմենտում: Գյուղացիները ցանկանում եյին ունենալ իրենց բուրմիստրներին (կալվածների կառավարիչներին. թարգ.) և իրենց գյուղապետներին, վորոնք կներկայացնեյին և կոլաշապաննեյին իրենց շահերը, իսկ կալվածատերը ցանկանում եր, վոր մնան իր պահապան չները, վորոնց նա նշանակել եր ձորտատիրական ժամանակներում: Այս հողի վրա տեղի եյին ունենում անթիվ գործերգություններ, անշի եյին ունենում անթիվ ընդհանրումներ, վոր զարգում եյին միայն զինվորական եկզեկուցիաների ոգնությամբ—որորքը դործի յեր գրվում ամեն քայլագոխում—միայն դաժան ծեծի ոգնությամբ: Յեկ դարձյալ հանդիպում ենք ամենաարիստկրատական անուններից մեկին, Տվերի նահանդում հսկայական կարգածների տեր գեներալ-ադյուտանտ Զինովյեվին: Այդտեղ ժանդարմական գրություններն սկսում են Սալտիկովի «Պոտշոնսկայ տարինա»—յի քաղաքացները թվալ:: Զինովյեվը գրում ե գյուղացիներին զապով ժանդարմին: «Դուք ամենագործոն ե բարերար մասնակցություն ունեցաք այն անկարգությունների զաղարեցման գործին, վոր ծագել եյին Տվերի նահանդի բնեցեցի գագառի իմ կալվածում: Զեր ծեռք առած հաստատ և միանումն ժամանակ հեզ ու քիստունեյական միջնցների չնորդել կարգն արագ վերականգնվեց և յես համողված եմ՝ ամուր հիմքի վրա: Պարտավոր եմ զըսում ինձ ամենաանկեղծ կերպով չնորդակալ

լինել ձեղ այդ ժամանակ ձեր կրած նեղությունների համար : ի-
վերջո պարուք եմ համարում հաղորդել ձեզ, վոր յես առիթ ունեցա-
այս գործին ձեր ցույց տված ողտակար աշակցության մասին
հայտնել ի բարձր զիտություն թագավոր կայսեր և վոր նարին մե-
ծությունը բարեհաճեց ընդ սմին արտահայտվել, վոր ձեր հիմաս-
լի-յեռանդուն ծառայությունը վաղուց արդեն հայտնէ յև նորին
մեծությանը» : Իսկ նահանգական վարչությունը՝ մարդարների
բնական մրցակիցը՝ իր կատարած քննության հիման վրա դաշտուի
կերպով զրում եր Պետերուրդ այդ «հեղու քրիստոնեական մի-
ջոցների» մասին հետեւյալը : «Փոխ գնդապետ Սիմանովսկին,
մասնավոր կերպով հաղորդված տեղեկությունների համաձայն,
կտրված գալով՝ քահանային ուղարկեց Խողովրդին համոզելու, վոր
հոգանոնվեն : Գյուղացիները գարմացած հարցնում եյին. «Իսկ
ինչումն և յե՞րբ ե արտահայտի մեր անհնագանգությունը» :
Ապա ժամուարմական բարձրակառապան պահանջեց, վոր 10-20
մարդով դուղացիները իրեն ներկայանան, և նրանց հարկադրում
եր ստորագրություն տալ, վոր այժմյան բուրմիստրին, վորի վրա
նրանք դանդասովել և խնդրել են փոխի, բուրմիստր կազմեն :
Գյուղացիների գանդատների մասին իսկի խոսք ել չեղավ : Սառ-
բարության համար առաջինը պահանջվեցին Իլինսկ գյուղի մի
քանի գյուղացի, իսկ նրանցից առաջինը թուղթը պետք և ըս-
տորագրեր 50-60 տարեկան ծերունի Տրաֆիմը : Բարձրակառապայի
խոսքին՝ «ստորագրի՛ր, վոր այժմյան բարձրախորին բուրմիստր
կապահեք, «Տրաֆիմը պատասխանում ե. «Այդ հասարակության
գործն ե, յես մենակ, առանց հասարակության չեմ կարող» (այդ
կալվածում վաղուց իվեր, առում են գյուղացիները, բուրմիստր-
ներն ընարվում եյին հասարակության կողմից և հետո հաստա-
վում կալվածատիբոջից) : Այս խոսքի վրա բարձրակառապան սկսեց
իսկի Տրաֆիմի յերեսին, վոտքերը գետնին զարկեց և հետո հյու-
մայեց մտրակել : Տրաֆիմը միայն ազադակում եր . «կոսորագրիմ,
ինչ ուղու եք՝ կամորագրիմ» : Այդ գյուղացուն համարյա անզա-
գուրս տարան, քահանան նրան հաղորդություն տվեց : Պատժից
յիրեք որ հետո Տրաֆիմին տեսան-ամբողջ գլուխը ջարդված եր,
յիրեսը ծածկված կապույտ բծերով . թիկունքը մուղ-մորու զույն
եր ստացել . նա պառկած եր յերեսի ի վար, մորը բոնած և անդա-
դար կրկնում եր . «Ա՞խ ասոված իմ, մորթունեցին» : Տրաֆիմից
հետո պետք ե ստորագրել Անդրեյ Գարգելեվը : Նա ասաց . «թուղ-
թը տուր, մենք հասարակության մեջ կկարգանք» : Դարձյալ
բարձրակառապան սեփական ծեսեկը բուրմին, ամբողջ

մորուքը մնաց սպայի ձեռքում : Գյուղացիները պատմում են, վոր
նա շատերին այդպես լկեց . շարունակ աչքը տնկել եր մարդկանց
դիմքին և մորուքին . նրա առաջ ծունկ են չոքում՝ ինչո՞ւ յես ԱՌ-
կում : Իսկ նա փայտով խփում և մարդու յերեսին : Հինգ գյուղա-
ցու և գրագրին գրգռիչները զուրս բերին՝ նշելով գատի հանձնել
նբանց, իսկ դործի մեջ քաշված մնացած 20 մարդուն վարչական
կարգով մտրակներով սկասութիւններիցիցին : Գանակոծում եյին
ժեծ մասամբ նրանց, ովքեր գանդասավում եյին բուրմիստրի վրա :
Գանակոծում եյին դաշտանորեն . պատժից յերեք որ հետո Ֆելի-
պովի մարմնից փայտի կոչտեր եյին հանում» :

1860 թ.՝ մենակ պաշտոնական տվյալներով՝ 65 գյուղացու
ծեծելով մահացրել են : Մենակ պաշտոնական տվյալներով, իսկ
դուք կուհում եք, վոր հաղիվ թե տա զեպից մեկը պաշտոնա-
դուք կուհում հայտնի զանար, մնացած իննը տասերորդը մնում
կան չըշանում հայտնի զանար, մնացած իննը տասերորդը մնում
կար առաջ չըշանակներում : Այս կատարվում եր 1860 թ.՝ Մի՛ կար-
ծեք, թե մարդկանց ծեծելով մահացնում եյին Յեկատերինա թա-
գուհու ժամանակ, ծեծելով մահացնում եյին Պրոստակովները,
Սկոտինիները : Այդ կատարվում եր 1860 թ., յերբ առկա յեր ամ-
բողջ Պուշկինը, յերբ առկա յեր ամբողջ Լերմոնտովը, առկա յեր
ամբողջ Գովոլը, գրված եք Տարգինեվի «Խուրդինը», գրված եր
Լիվ Տոլստոյի «Կալվածատիբով առավոտը», այդ ժամանակ գյու-
ղում մարդկանց ծեծելով մահացնում եյին : Ահա ինչպիսի ուժեղ
զանար եր Տորտոսիբական իրավունքը նույնիսկ իր անկման նա-
խորյակին : Դա ամեններին անտառմ զագան չեր, և երթափ ծեր առ-
յուծ չեր, վորի մորթը կիսով չափ մազը թողել եր : Դա դեռ բա-
վականաշափ համարձակ և ուժեղ գիշատիչ եր, և զուր չեր, վոր
նա հետո, 1905 թ. իրեն այդպես ցույց տվեց :

... Ահա ի՞նչ եր գրում Սարտովի ժանդարմը (արդեն 1860 թ.
հունիսին) իր գիտապետությանը (հաշալեցեա), սկզբում
բնութագրելով Մարտասովի կալվածատերերի հայացքները գյու-
ղացիական հարցի վերաբերյալ . «գյուղացիական գործի վերաբեր-
յալ գործողությունների շատ սպելի մեծ համերաշխություն և զա-
տողությունների արտարանություն կարելի յեր գտնել ճորտ
գյուղական բնակչության մեջ . ամեններին յենթադրության մեջ
չընկնելով, նա չի գալաճանում արդեն մի անզամ իր պատագրու-
թյան վերաբերյալ կաղմանց հասկացողությանը և աղատագրու-
թյուն բառը գույտ առաջցի իմաստով հականալով, առաջմ հանա-
պարագի վարժունքներին, այն հաստա համոզմունքով, վոր մոտ

ժամանակում՝ բոլորովին աղասադրվելով՝ կարվածառերնի կամայականությանց կիրկիլի և լիակատար ինքնուրույնություն էստապայում հանգիստ կմնա, յերբ զյուղական բնակչությունը հետապայում հանգիստ կմնա, յերբ նրանց շափականցրած հույսեր չեն իրականանա, այդ արդեն բոլորովին այլ հարց ե, վոր միայն ժամանակը կարող ե լուծել: Աւշադրավ ե, վոր վարոշ ժամանակից իվեր պիտական զյուղացիների դաւը սկսում ե մասնակցություն ունենալ գյուղացիների գործիքն ինձ հաղորդած մասնավոր տեղեկությունների համաձայն, Պետրովսկի զավառի Մեծ Սերգորա գյուղի պետական զյուղացիները մտադրություն ունենի իրենց հարեւան կարվածատիրական գյուղացիներին ներչնչել, թե վորովհետև շուտով աղաս են լինելու, ապա կարող են ավելորդ հնապանդություն յերեսն չըրերել կարվածատիրերի հանդեպ և բահրա չվճարել: Թեև այդ վործը վճուականապես վոչ մի հետեւանք չունեցավ և չգործադըրք բաց, բայց այս հանդամոնքը մասամբ ուշադրության արժանի յի այն տեսակետից, վոր մի նոր ապացուց ե, թե անհրաժեշտ ե ընդհանուր հանդսության և հուղված մտքերը խաղաղացնելու համար շատապեցնել գյուղացիական հարցի վերջնական լուծումը, վորին անհամբերությամբ սպասում են ընդհանրապես բոլոր դասերը, ի մեջի այլոց նաև աղնվականները»: «Историк-Марксист» № 10, 1928 թ. հայտադիր Մ. Ի. Պոկровского—Չերմышевский и крестьянск. движение конца 50-х годов, стр. 5-8):

ԱՐԻՍՏՈԿՐԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԵՖՈՐՄԸ

Դրիմի սրատերազմը չափազանց հիվանդազին արսառհայություն ունեցավ Ռուսաստանի ֆինանսական գրության վրա: Ճորտատիրական կարգը գրսեփորեց իր անընդունակությունը պատերազմի ֆինանսական կողմն ել ապահովելու ասպարիզում: Անկասկած ե, վոր Դրիմի սրատերազմի վողբալի ընթացքը և ամոթալի վախճանը վոչ միայն այսպես կոչվածք հասարակության» մեջ միանգամից մեծացրին հորտատիրական իրավունքի վերացման կողմնակիցների թիվը և աղդեցությունը, այլ և կառավարության մեջ խախտեցին դեպի նա յեղած սիմպատիան, ապացուցելով նրա ստրատեգիական աղորությունը:

Խաղաղ ժամանակ ֆինանսական կացության ամբողջ փառքյունը պունազարդվում եր պաշտոնական կարմիր ու սպիտակ

դեղերով, բայց պատերազմը միանգամից յերեվան հանեց ցուցական ֆինանսական բարորության վատած նորատիրական հիմքը:

«1853 թ.—դրում ե Միգուլինը, —գանձարանն արդեն փոխանակման ֆունդում վոչ մի ոռութիւններ, վոր նրան պատկաներ: Դեռ ավելին, նորմայից վեր բաց թողնված վարկային տոմսութիւն (170,2 միլ. ռ.) լիարժեք ոռութիւն չեյին ապահովվում, յեթե նույնիսկ ապահովում համարենք ֆոնդին հանձնված արժեթղթերը»:

Գյուղացիների աղասապրումից առաջ բուրժուազիայի գիտակցության և ուժի աճումը յերվան յեկալ 1857 թ. մաքսային տարիի նախապատրաստման և քննության ժամանակ: Թեև 1850 թ. մաքսային տարիի վատաջ շատ գրույքներ մեղմացրեց, դժոհություն առաջացնելով ոռու արդյունաբերողների մեջ, սակայն նրանք ընդհանուր առմամբ իներտ մնացին և այդ «լիբերալ տարիի ֆինանսապատրաստման ու հրատարակման պրոցեսին ընդհանուր առմամբ պասսիվ անվտահությամբ եյին վերաբերվում:

Այլ պատկեր ե ծավարիվում մեր առաջ 1857 թ. տարիի վատաջի քննության ժամանակ: Ռուսական բուրժուազիան ակտիվ մասնակցություն և ունենում դրան, ամեն ջանք թափելով, վորպեսի նոր տարիի վատաջին ցանկալի ուղղություն տրվի:

Ալեքսանդր Ա-ի կառավարությունն ուշադիր ունկնդրում եր արդյունաբերողների ձայնը: Արդյունաբերողների բազմաթիվ «իմուլիլները», «կարծեքները», «գրությունները» կառավարական իշխանության վրա ներգործում են այն նպատակով, վոր նրան շեղեն պրոտեկցիոնիզմը մեղմացնելուց:

Ռուսաստանի մանուփակտուրիստների և ներքին առմտրականների լիազորները 1857 թ. կետրվարին ֆինանսների մինիստրին ինդիք են տալիս, վորի մեջ կառավարությանը նախադրուցացնում են յելլուպական քաղաքանատեսական ուսմունքներով հափշտակելուց, վորոնք քայլայիչ են ոռուական ժողովրդական տնտեսության համար:

Գործարանատիրերն ապացուցում են, վոր լիբերալ տարիի քայլայիչում են վոչ միայն ոռու արդյունաբերողները, այլև ուս գյուղացիները, վորոնց համար գործարանային գատումները խոշոր ոժանդակություն են հանդիսանում: Այստեղից գործարանատերերը դիվերսիա (տարագարձություն) յեն անում քաղաքական կողմի վրա:

«Դատումների կորուստը, —դրում են նրանք, —հեշտությամբ

կարող ե հասցնել այն հետեւանքներին, վորոնց անհամբերությամբ սպասում են արեգական ոտարյակաբացիներն իրենց այնպիսի անցքերի, վոր համերաշխ են նըանց գեմոկրատական սկզբունքներին և նըանց իրային և քաղաքական շահերին, հատկապես, յեր այլ պատճառների հետեւանքով ժողովրդի մեջ հիվանդագին վորի առաջանաւա»:

Այդ ընդարձակ գրության մեջ հանգամանորեն վերլուծվում է Բուռաստանի տնտեսական դրությունը և զանազան խմբերի շահագրգուվածությունը հովանովորող բարձր տարիքներով: Իհարկե, այդ վերլուծությունը վերջանում է մի ընդհանրացումով, թե բարձր արգելիչ մաքսերի ժամանկ ամբողջ Ռուսաստանը հարըստանում է: Գյուղացիները գործարանից գյուղ են՝ տանում զարծարանային բարձր դատումը, կերակրելով վոչ միայն իրենց, այլև նրանց կեռող կարգածառերերին: Պետությունը հակայտական գանձարանային հասույթներ և ստանում, իսկ ոռուսական արդյունաբերությունը կարող ե գոյություն ունենալ միայն արգելիչ տարիքների չինական պարսպի յետեւ:

Մոսկվայի գործարանատերերի այս «ինդիբը» միակը չէր: 1857 թ. տարիի Փայտին ուժիորմի նախապարաստումն առաջ բերեց բավական հարուստ գրականություն, վորը կառավարության առաջ միջնորդում եր վերականգնել արգելիչ մաքսային գրություները: Հայտ յեռանգուն եյին գործում: Նրանք դիմում են Մոսկվական դատավորական պատությունը՝ ողեռոկտորշ՝ ոմական դատավորական պատությունը վայրի գեներալ-նահանգապետ Արլովին և խնդրում, վոր թույլ տա իրենց լիազորներին կառավարությանը փաստել ներկայացնել պրոտեկցիոնիզմի պահանձման անհարաժեշտության ոգտին: Իշխան Արլովն այդ միջնորդությունը հանձնում է Փինանսների մինիստրին, իսկ վերջինս դիմում և անմիջականորեն թագավորին, վորը և արդյունաբերողներին թույլատրում է բանադր և գրավոր շաբադրել իրենց ինորիբը:

Կառավարության բոլոր բարձրագույն ներկայացուցիչները գործարանատերերից զբություններ, հայտարարություններ, միջնորդություններ և խնդիքներ եյին ստանում: Բուռական արդյունաբերական վոչ մի խոշոր ճյուղ չզգացավ իր ձայնը տալ (և այդ ձայնը, ինչպես տեսանք, համում եր գահակալին) պրոտեկցիոնիզմի պահանձման և ռեժիզացման ոգտին: Դ. Ա. Ֆախով արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք աշխատում եյին արտասահմարերության այն ճյուղերը, վորոնք աշխատում եյին արտասահմանից բերվող հումքով և կիսաֆարբիկատով, և այլպիսով անմի-

ջականորեն չահաղբոված եյին ավելի չուտ պլոտեկտիվմի մեղմացումով, նույնիսկ նրանք անհատական եղոխմը ճնշում եյին դառակարգայինի ոգտին և արտահայտվում մաքսերի ընդհանուր բարձրացման ոգտին: Այսպես՝ որինակ՝ 1856 թ. սեպտեմբերին Փինանսների մինիստրին ներկայացրած խոշորագույն Մոսկավի մի և մանածագործային խոշոր Փարբիկանուները գրում են:

«Մենք չահաղբոված ենք բամբակի մանածի եժանացումով, բայց արդարության և մեր սեփական ապահովելու մինչըստեշտության զդացմունքը մեզ թույլ չեւ տալիս հայրենի մանածագործարանների սովերման կամ քայլքարման միջոցով մեր ժամանակավոր չահերի բավարարմանը ձգտել»:

Այն գիրքը, վոր արդյունագերուղները բանել եյին 1857 թ. տարիի Փայտին ուժիորմի վերաբերմամբ, չարունակ հենց նույն եր, ինչի վրա նրանք կանգնած եյին խոշոր արդյունաբերության յերեվան գալու առաջին որերից: 1850 թ. տարիի Փայտին կոմիտեն տվել և սուսական արդյունաբերողների հաջող բնութագիրը:

«Բուռական արդյունաբերուղները, — զբում եր այդ կոմիտեն, — սովորած լինելով գործել արգելիչ տարիի հովանագորության տակ, տարիի վրա նայում են իրենց հաջողական կազմուների և բարեկեցության զիսալոր և միակ պայմանի վրա: Բավորիան և, վոր նրանք իմանան, թե այս կամ այն մաքսը ցածացված է, վորակեսղի այդ միջոցառությանը վերաբերն իրենց բոլոր վեասները և անհաջողությունները: Ըստհանրապես արդյունաբերողները արգելիչ սիստեմի ժամանակ նրա վրա նայում են իրենց իրենց անկապունքի իրավանքի վրա, և ամենափոքրիկ մըրցակցությունը նրանց վախեցնում և ցնցում է»:

Ստկայն այս անգամ, չնայած արդյունաբերողների յեռանգուն և կազմակերպված նկրառությունը հովանագուող տարիի վերջին զիսպի արգելիչ տարիի և նոր խոշոր զիտումներ չարեց: Պետության գանձարանային շահերը, աղջուր կառավարության շահերը — այս ամենը միասին կառավարության ստիպեց տարիի Փայտին նշված ուժիորմն անցկանել:

Այն հանգամանքը, վոր կառավարությունը չուզեց արգելիչ տարիի ուղին վոսք զնել, արդյունաբերողների միջամայրում մեծ զժոռհություն առաջացրեց և ուժեղացրեց նրանց համարման և պետական իշխանության վրա կազմակերպված ճնշելության ազգային պատասխանի ուժիությանը ազատագույն պատասխանի ուժիությանը ազատագույն պատասխանի ուժիությանը: 1854 թվականից՝ զբում ե նշանավոր պրոտեկցիոնիստ

Շիպովը, — մեր ֆրիտուեղերների մի ազդեցիկ խմբակ ուժ և ձեռք բերել. նա ուշադրություն չի դարձնում հասարակության բողոքին, վորը զիտակցում է այն ուղիի ամբողջ վտանգավորությունը, վոր ժողովրդի քայլայման դնուվ ոտարյակվեցա յերկիմասս զավասանքին և արժանացնում: Մենք կատենք, վոր 1857 թ. տարիին սպանեց արդյունաբերության ճյուղերի մեծագույն մասը».

Տարիին կանոնադրության քննությունը զուգաղեցից հասարական կյանքի ուժեղ աշխուժացմանը: Հասարակության մեջ ճորտափրական իրավունքի առաջիկա վերացման մասին յեղած լուրերը պաշտոնական հաստատություն ստացան Անգլիանդր Անգանավոր ճառում⁸ և ուսումած նախապատրաստական աշխատանքներում: Ռուսական բուժությունի հանձննս իր դեռ այն ժամանակ սակալաթիվ իրենուոների անտարբեր չվերաբերվեց առաջիկա ուժուորմի այդ լուրերին: Նա ճիշտ հաշվառեց այն տնտեսական տեղաշարժության նշանակությունը, վորով նշանավոր եր դաւնում այդ ուժուորմը:

Մոսկվայի վաճառականությունը բուռն վողեռությամբ է ընդունում գյուղացիների ազատադրության առաջին պաշտոնական լուրերը: Այն ժամանակվա բուժությունի վոսկերանը, Վ. Կոկորեվը, վորի ճառն ըստ կարգի լոժերորդն եր, իմիջի այլոց նագեղ նարտասանության և դիմում:

1857 թ. գեկումբերի 28-ին Մոսկվայում, վաճառականների ժողովարանի դահլիճում, հանդիսավոր նիստ և կազմակերպվում գյուղացիների ազատադրության տեղեկությունների առթիվ: Կոկորեվը, վորի հետ մենք դեռ ալենի մոտիկից կծանօթանք, զուտ առում է.

«Լույսն ու խավարը հավիտենական սպայքարի մեջ են: Հաղթանակում է լույս—կարմիր որեր են գալիս, մարդկությունը շտկվում է, բարի, խելոք դառնում, աճում: Հաղթանակում է խավարը— դառն որեր են զալիս... Այսպիսի կենդանարար լույսի ներկայությունը մենք զգում ենք մեզ վրա, իսկ նրա ճառագայթը ցոլում է ուղղակի Ալեքսանդր Ա սրաից: Այդ լույսի արտահայտությունն են ցարի այն ցանկությունը, թե մեր յեղբայր-դյուլացիներին պետք է դուրս բերել այն դրությունից, վոր նրանց և նրանց հետ միասին մեզ տանջում եր համարյա յերեք դար. այժմ այց լույսով բուռագորված և ջերմացած և ամբողջ ուսա յերկիրը: Ահա ի՞նչ վառ լուսավորության տակ ենք մոտենում նոր 1858 թ., 15 միլիոն մարդկանց համար բացվում է քաղաքացիական լիսակատար իրավատիրության արշալույսը: Արա չնորհիկ բոլորս վոտք

ևնք դնում նոր կյանքի շեմքը, վերածնվում ենք, մեր դարկերակ-ները այլ կերպ են խփում— համաչափ, ամուր, ուժեղ: Մենք ոյ-ժրմ կարող ենք մեր գրությունը համեմատել այն մարդկանց զրության հետ, վորոնք մոտեցել են այն լեռան, վորով պետք ե վեր բարձրանան: Այդ չբացված հանապարհի վրա մեղ շատ տառասկ-ներ կհանդիպեն: Բայց արդյոք վախ ունենանք արդեկներից այն ժամանակ, յերբ լեռան վրա կանգնուծ ե մեր ցարը և մեղ իր մոտ ե կանչում: Մենք այդ տեսնում ենք ծծալատի բացված արանքե-րից: Յեվ այն լեռը, գեղի վորը կանչում ե մեղ ժամանակը, հույսի լեռն է: Յալը հույսը դնում է ժողովրդի վրա, ժողովուրդը հույսը դնում է ցարի վրա...»

Ապա Կոկորեվը պարթեթիկորեն դիմեց ներկա յեղող վաճառականությանը և առաջարկեց նպաստի Փոնդ հավաքել և գյուղացիներին ողնել, վոր իրենց առարկները հետ գնեն:

«Հայրենի անցքերի այսպիսի մեծ որերում շիտուկ և անկեղծ լինենք, — զգում եր Կոկորեվը, և ասենք ծծալատությունը. Էն վոր մեր բոլոր կապիտալները գլխավորագետ զյուղացիներից են զոյացել:

Այս նկատողությունն ամենից ավելի վերաբերում է ողուկապահուներին. նրանց կապիտալները կազմվել են արդեն գրագյուղացիական աշխատանքային դրամներից: Ի՞նչ հարմար առիթ և չնորհակալություն հայտնել գյուղացիներին հենց նրանց տված հարստության համար»:

Կոկորեվը շարունակում եր ամեն մի հարմար դեպքում պաթեթիկ կերպով չնորհակորեյ նորտատիրական իրավունքի վերացման պկղը: Այդ ճառերն արտասանելու հրապարակներն ելին այն ճաշկերույթները, վոր կազմակերպում եր վաճառականությունը: Կայսերական նոր թղթի (ռեսլիքիպատի) առթիվ կազմակերպված ճաշկերույթի համար կոկորեվը մի ճառ պատրաստեց, վոր սակայն չհաջողվեց արտասանել: Այդ ճառը տորմեց «РУССКИЙ ВЕСНИК»-ում: Այդ չափազանց աղմուկ հանուժ ճառում, վոր անհանդատ ցրեց իշխանությանը, Կոկորեվը վողջունում եր նորտատիրական իրավունքի վերացումը, վոր արդյունաբերական գործունեյության համար լայն ասպարեզ և բանալու:

«Երբ նոր կարգը, — դրում եր նա այդ չափասանված ճառում, — գյուղացիներին լիություն կտա, այն ժամանակ ամբողջ տոհուուրը կղարդանա և այլ չափեր կընդունի, և մենք, վաճա-

ռականներս, նոր հակայտկան շահ կումբնանք: Իսկ ինչո՞ւ այլ շահը մենք ձրի պիտի ստանանք, առանց վորեն մտանալցություն ունենալու գյուղացիների նոր կազմակերպման ընդհանուր գործին: ԶԵ՞ վոր մենք կամաճնք նայել և՝ աղնախաններին, և՝ գյուղացիներին, վերջիններիս նայելն ել ավելի ամոթայի կլինի, վորով հետեւ հենց մեզնից շատերը վերջերս են միայն դուրս յեկել դյուղից, և յետ, վոր այս բառերն առում եմ, գյուղացիական դատում հարազաններ ունեմ: Կալվածատերերի հողերի վրա բնակվող գյուղացիները պետք է դուդով կամ աշխատանքով յետ գնեն իրենց բնուկարանների և բանջարանների արժեքը: Բայց դրանից, այն չողի համար, վոր նրանք ցանքի համար կալվածատերերից կոտանան, պետք և մշակեն կալվածատիրոջ հողը, այսի և այն հողը, վոր այժմ ել մշակում են... Ահա և վաճառականության համար առիթը պատրաստ և մասնակցություն ունենալ գյուղացիների բախտի կարգավորման բործին: Ինչո՞ւ բոյսը առև վաճառականների մեջ բաժանուրդագրություն չըանալ, թե ո՞վ և ինչքա՞ն գյուղացիական բնակարանի համար ցանկություն կհայտնի փոկ վճարել կալվածատերերին»:

Վաճառականների այս ճաշկերութիւնները և կոկորեմի ճառերը անհանգուստացրին. Մուկվայի իշխանությանը: Նա դրանցում նկատեց ամենից առաջ վաճառականի անտեղի միջամտությունն պետության և աղնավականների գործին: Վաճառականն սկսում եր հասարակական կյանքի հրապարակ դուրս դալ և այս առթիվ աղնավական իշխանությունը շատ բարկանում եր:

Եերբ Կոկորեմը վարձեց վերև մեծ թերքան ճառը բրոշյուրով տպագրել և տարածել, նա վճառական մերժում առաջակ իշխանությունից:

Սակայն քաղաքական տեսակետից ուռւական բուրժուազիան գյուղացիների աղատագրության նախապատրաստման եպոխայում լիովին հավատարիմ հպատակի գիրք բռնեց: Յերկրի ուժեղ տնտեսական աշխուժացման հեռանկարները խթանեցին բուրժուազիայի տնտեսական եներդիան, ուժեղացրին նրա դպրակարգավիճ համախմբածության ձգության ձգությում: Նրա մեջ ձգությում առաջացավ աղնավականության կողքին ինքնակալ իշխանության արենի տակ իր տեղը գրավել: Բայց ուռւական բուրժուազիան հանձննա այնպիսի, ինչպիսին կոկորեմն և, վորն իրավական իրավունքի մասին չեր ել մտածում:

(П. А. Берлин—Русская буржуазия в старое и новое время, изд. «Книга» Л.—М. 1925 г. II-ое допол. изд. стр. 102-111).

Պատմի IV հատվածի վերաբերյալ.—Անփորմի հետեւանիքները. Գյուղացիության վերաբերելուն դեպի ուժիրմները.

Պաղումակի նահանգում, Փլիդելադյանատ բարոն Կորֆի գեղացման համաձայն, կոորդինատարվելու հողի վրա խոշոր հուզմունքներն ընդդրկեցին նահանգի 12 գավառի 159 գյուղի 80 հազար արական բնակչություն: Գյուղացիներին հնագանգեցնելիս՝ բարոն Կորֆը մարմնահան պատիժներ կիրառեց 159 գյուղից միայն 21-ում. այլպիսի ներողամտություն դրդում եր նրան այն յերկուղը, «վոր խստությամբ գյուղացիներին չգազագեցնի կալվածատերերի գեմ և չարամիութարդիանց առիթ չտա մատնանշել գյուղացիներին, թե ինչպես դաժան են վարչում նրանց հետ»: Մի անգամ Յամտորի ղավառի Տիմանովկա գյուղում, յերբ գյուղացիները կովի ելին բռնվել զինվորների հետ, վորոնց հրամայակած եր հրացաների կոթերով պաշարել բաղմությունը, վորով հետև նա արդելք եր հանդիսանում մեկ գյուղացու կալվածավորման, վասնի վրա գոնովեց մի գյուղացիի, սրտի տակ սկինի վերքով, մուրից և մեռալ: ուժի գյուղացիի յել դիմադրություն ցույց տալու համար դատի հանձնվեցին. Օրանցից 5-ին պատեցին մարտկի 60 հարցածով և ուղարկեցին կալվածավորական պաշտերը, զրկելով ըստաքացիական իրավունքներից, իսկ յերեքին պատեցին մարտկի 40 հարվածով:

Պենզայի Յամտորում գյուղացիների հողմունքները հատուկ տժով ծավալվեցին կերենսկի, Գորոդիշեյի և Զեմբարի գալվանիքում: Կերենսկի ղավառի կանգեկեվկա գյուղում Պենզայի նահանգի հարենան ղավառներից և Տամբովի նահանգից մոտ 1000 մարդ հավաքվեց, վոր «ազատություն» բացականչերով գյուղից Դյուզ եր տանում կարմիր դրոշակը և վոչ վոքի հորդերներին ուշք չդարձնելով՝ հայտարարում եր. «Ամրող հողը մերն ե: Բահրա չենք տա և կալվածատերերի համար չենք աշխատի»: Գեներալայոր Դրենյակինը, տևանելով այդ բանում վոչ միայն անհնապանդություն կարգածատերերի հանդեպ և որենսդրության սիսալ հասկացողություն, այլ ակներեւ խոսվություն և վոտնձգության իշխանության ու գորքի գեմ, համբակելով լոթը վաշտ զինվոր, միջոցների զիմեց խոսվություն զիսավոր գրքութների գեմ Զերնոցյելով գյուղում, վորտեղ զինվորների հետ ընդհարվելիս աղանված Ելին յերեք գյուղացի. կալվածավորելով 12 «չարամիտ բարձագարակների», նա կանգեկեվկա գյուղը գնալիս՝ ճանապարհին



Հնագանդեցրեց Վիսկոյե գյուղի գյուղացիներին, ընդ մարտում իմացավ, վոր ամենավտանգավոր խորվարաբն այդ գյուղացի մոլական Յեղորշեմն եր, վորը կարծ ժամանակում այնպիսի ազդեցություն եր ձեռք բերել ամբողջ շրջանում, վոր զանազան գյուղերից նրա յետեհից կառք ելին ուղարկում, վոր գտ մանիֆեսալ ողարշաբնի, նրան ուղեկցում ելին թերը մտած և յետեհից նոտարան տանելով կանգնեցնում ելին բարձրության վրա, վորտեղից նա բոլորին ավետում եր ազատությունը: Խոռվության հաջողությունն իր կողմը թեքելու համար, Յեղորշեմը սպառնում եր կախել նրանց, ովքեր չեն լսի իրեն, իր զլուկոր գովելով՝ նա ասում եք, թե նույնը կանի նաև գյուղացիներին ճշող պետերին: (Քօվալենսկի—Խրեստոմատիա ու ռուսական պատմություններ:

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

№3 առաջադրության («Գյուղացիական պատերազմները XVII և XVIII դ. դ.») 47 եջի վերեից 5-րդ տողում տպված է՝ «առևտյական հողագործության համար կապիտալիստական զարգացման ազատ ուղի ապահովեր», սկսք և լինի՝ «առևտրական հողագործության համար տպանքային տնտեսության, իբրև կապիտալիստական զարգացման պայմանի, տղատ ուղի ապահովեր»:

Նույն եջի վերեից 21-րդ տողում տպված է՝ XIX դարի», սկսք և լինի՝ XIX—XX դարերի»,

